ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

**№ 1307-Ա/2** **28 սեպտեմբերի 2020 թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ՝ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 1057-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2010 թվականի մայիսի 18-ի N 393-Ն հրամանի հավելվածի 4-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2011 թվականի սեպտեմբերի 20-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով վերապատրաստման հարցաշարը հաստատելու մասին» թիվ 1057-Ա/Ք հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության պետի տեղակալ Օ. Կամավոսյանին՝ հրամանը տեղադրել նախարարության պաշտոնական կայքէջում:
3. «Կրթություն» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Գ. Մինասյանին՝ հրամանը հրապարակել շաբաթաթերթի առաջիկա համարում:

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2020 թվականի սեպտեմբերի 28-ի

N 1307-Ա/2 -Ա/Ք հրամանի

Հավելված

ՀՀ կրթության և գիտության

նախարարի 2011 թվականի սեպտեմբերի 20-ի

N 1057- Ա/Ք հրամանի

Վերապատրաստման և հավաստագրման

քննությունների հարցաշար

ՀՀ Սահմանադրություն

***Հարց 1***

*Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են՝*

- Սահմանադրությամբ կամ օրենքներով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 6, 1-ին պարբ.*

***Հարց 2***

*Ո՞ր օրենքն ունի հետադարձ ուժ:*

- Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքը՝

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 72*

***Հարց 3***

*Տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունք ունի՝*

- Յուրաքանչյուր ոք՝ առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 42, մաս 1*

**Հարց 4**

*Նշվածներից ո՞ր դեպքում է հանցագործության համար մեղադրվողը համարվում անմեղ՝*

- Քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 66*

**Հարց 5**

*Հայաստանի Հանրապետությունում գործում են՝*

- Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 163*

**Հարց 6**

*Մտավոր սեփականությունը պաշտպանվում է՝*

- օրենքով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 60, մաս 7*

**Հարց 7**

*Նշվածներից ո՞ր մարմիններն են ՀՀ-ում իրականացնում արդարադատություն՝*

- Միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 162, մաս 1*

**Հարց 8**

*Նշվածներից ո՞ր իրավական ակտով է սահմանվում ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման կարգը՝*

- Օրենքով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 47.1, մաս 6*

**Հարց 9**

*Ո՞վ է ստորագրում կառավարության որոշումները՝*

- ՀՀ վարչապետը:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 153, մաս 2*

***Հարց 10***

*Նշվածներից ո՞ր դատարանն է օրենքով նախատեսված դեպքերում որոշում կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին՝*

- Սահմանադրական դատարանը:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 168, մաս 12*

***Հարց 11***

*Ո՞վ է նշանակում և ազատում մարզպետներին՝*

- Կառավարությունը:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 160, մաս 2*

***Հարց 12***

*Ո՞վ ունի կրթության իրավունք՝*

- *Յուրաքանչյուր ոք:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 38, մաս 1*

***Հարց 13***

*Ո՞ր իրավական ակտով են սահմանվում պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը՝*

- *Օրենքով:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 38, մաս 1*

***Հարց 14***

*Ո՞ր կրթությունն է անվճար՝*

- *Միջնակարգ:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 38, մաս 1*

***Հարց 15***

*Ո՞ր տարիքի երեխաներին է արգելվում ընդունել մշտական աշխատանքի՝*

- Մինչև 16 տարեկան:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 57, մաս 4*

***Հարց 16***

*Նշվածներից ո՞ր լիազորությունն է իրականացնում համայնքի ավագանին՝*

- Օրենքով սահմանված կարգով ընդունում է համայնքի տարածքում պարտադիր կատարման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 182, մաս 3*

**Հարց 17**

*Նշվածներից ո՞ր իրավական ակտով է սահմանվում համայնքի բյուջեի եկամուտների ձևավորման և ծախսերի իրականացման կարգը՝*

- Օրենքով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 185, մաս 2*

**Հարց 18**

*Որո՞նք են ՀՀ վարչատարածքային միավորները՝*

- Մարզերը և համայնքները:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 121*

**Հարց 19**

*Ովքե՞ր չեն կարող ընտրել, ընտրվել և մասնակցել հանրաքվեին՝*

- Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 48, մաս 4*

**Հարց 20**

*Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքն ու՞մ է պատկանում՝*

- Պատգամավորներին, Ազգային ժողովի խմբակցություններին և Կառավարությանը:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 109, մաս 1*

**Հարց 21**

*Ո՞ր պաշտոնատար անձանցից է կազմված ՀՀ կառավարությունը՝*

- Վարչապետից, փոխվարչապետներից և նախարարներից:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 147 մաս 1*

**Հարց 22**

*Ո՞ր մարմինների միջոցով է համայնքն իրականացնում իր ինքնակառավարման իրավունքը:*

- Տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի միջոցով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 182*

**Հարց 23**

*Ո՞վ է տնօրինում համայնքի սեփականությունը:*

- Համայնքի ավագանին՝ օրենքով սահմանված կարգով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 184, մաս 3*

**Հարց 24**

*Ո՞վ է նշանակում հանրաքվեն:*

- ՀՀ Նախագահը:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 206*

**Հարց 25**

*Նշվածներից որ բնագավառներն են գտնվում պետության հոգածության և պաշտպանության ներքո:*

- *Հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 15, մաս 2*

**Հարց 26**

*Հայաստանի Հանրապետության զինանշանն է՝*

- *Կենտրոնում՝ վահանի վրա, պատկերված են Արարատ լեռը՝ Նոյյան տապանով, և պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշանները: Վահանը պահում են արծիվը և առյուծը, իսկ վահանից ներքև պատկերված են սուր, ճյուղ, հասկերի խուրձ, շղթա և ժապավեն:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 21, մաս 2*

**Հարց 27**

Հայաստանի Հանրապետության խորհրդանիշերն են՝

- ՀՀ դրոշը, ՀՀ զինանշանը, ՀՀ օրհներգը:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 21*

**Հարց 28**

*Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են՝*

- *Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 14, մաս 1*

**Հարց 29**

*Ու՞մ կողմից է ընտրվում ՀՀ Նախագահը, ի՞նչ ժամկետով:*

- Հանրապետության Նախագահն ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ յոթ տարի ժամկետով:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 124 և 125*

**Հարց 30**

*Ու՞մ առաջարկությամբ և ո՞վ է Կառավարության կազմում կատարում փոփոխություններ:*

- *Հանրապետության նախագահը, վարչապետի առաջարկությամբ, փոփոխություններ է կատարում Կառավարության կազմում:*

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 131*

**Հարց 31**

Մարդու իրավունքների պաշտպան կարող է ընտրվել՝

- Բարձրագույն կրթություն ունեցող, պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող յուրաքանչյուր ոք:

*ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 192, մաս 2*

## *«Կրթության մասին» ՀՀ օրենք*

**Հարց 32**

*Ինչպե՞ս է իրականացվում կրթական ծրագրերի լիցենզավորումը՝*

- ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության սահմանած կարգով:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդ.41,մաս 3*

**Հարց 33**

*Ո՞ր մարմինը կարող է հիմնադրել ռազմական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ՝*

- ՀՀ կառավարությունը:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդ. 29, մաս 4*

**Հարց 34**

*Հանրակրթության բնագավառում նշվածներից ո՞րն է մարզպետի իրավասություններից՝*

- *Պետական ուսումնական հաստատություններին օգտագործման իրավունքով հանձնված շենքերի կառուցման, շահագործման և պահպանման ապահովումը:*

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 38, մաս 4*

***Հարց 35***

*Նշվածներից ո՞րն է հանրակրթության բնագավառում համայնքի ղեկավարի իրավասություններից՝*

- Ուսումնական հաստատությունների ինքնակառավարման սկզբունքին համապատասխան՝ աջակցել համայնքի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.39, մաս 1*

***Հարց 36***

Կրթության բովանդակությունն ապահովում է՝

- Սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.11, կետ 2.1*

***Հարց 37***

Կրթության բովանդակությունն ապահովում է՝

- Սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.11կետ 2.2*

***Հարց 38***

Կրթության բովանդակությունն ապահովում է՝

- Հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.11կետ 2.3*

***Հարց 39***

Կրթության բովանդակությունն ապահովում է՝

- Հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.11, կետ 2.4*

***Հարց 40***

*Ո՞րտեղ և ու՞մ ընտրությամբ կարող է իրականացվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը՝*

- Կարող է իրականացվել ծնողների ընտրությամբ, ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 19, .3*

**Հարց 41**

*Ուսումնական հաստատությունը ե՞րբ է համարվում սպեղծված՝*

- Հիմնադրի (հիմնադիրների) կողմից հաստատության կանոնադրությունը հաստատելու և օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 30,2*

**Հարց 42**

*Ինչպես է վերակազմակերպվում ուսումնական հաստատությունը՝*

- Միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման և վերակազմավորման ձևերով:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.33,2*

**Հարց 43**

*Երբ է ուսումնական հաստատության լուծարումը համարվում ավարտված, իսկ դրա գոյությունը՝ դադարեցված՝*

- Իրավաբանական անձանց պետական գրանցման մատյանում այդ մասին գրառում կատարելու պահից:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.35,4*

**Հարց 44**

*Նշվածներից ո՞րն է կրթության բնագավառում՝ ՀՀ կառավարության իրավասություններից՝*

- Պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունների հաստատումը:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.36, մաս 5*

**Հարց 45**

*Նշվածներից ո՞ր մարմինն է ապահովում կրթական քաղաքականության իրականացումը բոլոր փիփի ուսումնական հաստատություններում՝*

- Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.36,1*

**Հարց 46**

*Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում ՀՀ կրթության զարգացման պետական ծրագիրը, պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը՝*

- Կրթության պետական կառավարման լիազրված մարմինը:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդ.37,1*

***Հարց 47***

*Նշվածներից ո՞ր մարմինն է ապահովում հանրակրթական ծրագրերի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակումն ու հրապարակումը՝*

- *Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.37.3*

***Հարց 48***

*Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները՝*

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.37.5*

***Հարց 49***

*Նշվածներից ո՞ր մարմինն է համաձայնություն տալիս պետական համապատասխան լիազորված մարմնի կողմից ուսումնական հաստատությունների վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ՝*

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.37, կետ.15-1*

***Հարց 50***

*Նշվածներից ո՞ր մարմինն (կամ ղեկավարն) է համակարգում և վերահսկում դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը և ապահովում նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում՝*

- Մարզպետը:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.38. մաս 3*

***Հարց 51***

*Ի՞նչ վճարովի այլ աշխատանք կարող է միաժամանակ կատարել պետական ուսումնական հաստատության տնօրենը՝*

- Գիտամանկավաժական և ստեղծագործական:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.40, մաս 5*

***Հարց 52***

*Կառավարման ո՞ր մարմինն է հավելյալ վարձատրություն սահմանում սահմանամերձ, բարձր լեռնային և լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար՝*

- ՀՀ կառավարությունը:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.50,3*

**Հարց 53**

*Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը՝*

- *Կրթության զարգացման պետական ծրագիրն է:*

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.4, մաս 4*

**Հարց 54**

*Ո՞ր մարմինը և ո՞ւմ ներկայացմամբ է հաստատում կրթության զարգացման պետական ծրագիրը՝*

- Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացմամբ՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը:

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.4, մաս 4*

**Հարց 55**

*Ինչպե՞ս է սահմանվում կրթություն հասկացությունը՝*

- *Անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար:*

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 3, կետ 1*

**Հարց 56**

*Ինչպե՞ս է սահմանվում ուսումնական հաստատություն հասկացությունը:*

- *Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագիր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան:*

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.3, կետ 4*

**Հարց 57**

*Ո՞ր ուսումնական հաստատությունն է կոչվում կրթահամալիր՝*

- *Տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միավորումը:*

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.3, ենթակետ 8*

**Հարց 58**

*Ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին վերահսկում է՝*

- *Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը*

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.14, մաս 4*

**Հարց 59**

*Ուսումնական հաստատություններում ուսումնական տարվա սկիզբը և տևողությունը սահմանվում է՝*

- *Պետական կրթական չափորոշիչով:*

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.14, մաս 5*

**Հարց 60**

*Նշվածներից ո՞վքեր կարող են լինել ոչ պետական ուսումնական հաստատության հիմնադիր՝*

- *Ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:*

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.29, մաս 3*

**Հարց 61**

*Ի՞նչ նորմատիվ ակտով են սահմանվում ուսումնական հաստատությունների կառավարման մարմինները, դրանց ձևավորման կարգը և լիազորությունները՝*

- *Ուսումնական հաստատության կանոնադրությամբ:*

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.40, մաս 4*

**Հարց 62**

*Ո՞ր դեպքում կարող են իրականացվել օրենքով նախատեսված կրթական ծրագրեր՝*

- *Միայն լիցենզիայի առկայության դեպքում:*

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.41, մաս 1*

**Հարց 63**

*Ու՞մ է ուսումնական հաստատությունը հանձնում համապատասխան փաստաթուղթ (վկայական, ատեստատ, դիպլոմ)՝*

- *Կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած անձանց:*

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 44, մաս 1*

***Հարց 64***

*Ո՞ր պահից են ոչ պետական հանրակրթական հաստատությունները պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու իրավունք ստանում՝*

- *Լիցենզավորման պահից*

*«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.44, մաս 3*

***Հարց 65***

*Ի՞նչ նպատակներով կարող է օգտագործվել պետական ուսումնական հաստատությունների գույքն՝ օտարվելու դեպքում՝*

- Պետական ուսումնական հաստատությունների գույքն օտարվելու դեպքում կարող է օգտագործվել միայն ուսումնական նպատակներով:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի հոդվ. 45 մաս 4

## «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք

***Հարց 66***

*Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում և հաստատում տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրերը՝*

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.7, կետ 4*

***Հարց 67***

*Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը՝*

- ՀՀ կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.9,կետ5*

***Հարց 68***

*Ո՞վ է իրականացնում ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը՝*

- Ուսումնական հաստատության գործադիր մարմինը՝ տնօրենը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.10,կետ2*

***Հարց 69***

*Ի՞նչ իրավական ակտերով են սահմանվում ուսումնական հաստատության կառավարման մարմինների լիազորությունները՝*

- Օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.10,կետ 4*

***Հարց 70***

*Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում ուսումնական հաստատության կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները՝*

- Ուսումնական հաստատության խորհուրդը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 11, կետ 1.2*

***Հարց 71***

*Նշվածներից ո՞ր մարմինն է քննարկում և հավանություն տալիս ուսումնական հաստատության հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին՝*

- Ուսումնական հաստատության խորհուրդը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.11,կետ 1.4*

***Հարց 72***

*Նշվածներից ո՞ր մարմինն է վերահսկում ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարումը՝*

- Ուսումնական հաստատության խորհուրդը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 11, կետ 1.9*

***Հարց 73***

*Նշվածներից ո՞ր մարմինն է քննարկում ուսումնական հաստատության ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները՝*

- Ուսումնական հաստատության խորհուրդը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 11, մաս¬1,կետ 7*

***Հարց 74***

*Ո՞վ կարող է մասնակցել պետական ուսումնական հաստատության տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին՝*

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված և ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստացած անձը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 12, կետ1*

**Հարց 75**

*Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում պետական ավարտական քննությունների ժամկետները և անցկացման կարգը՝*

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.15,կետ 5*

**Հարց 76**

*Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում պետական ուսումնական հաստատությունում արձակուրդների ժամկետները և տևողությունը՝*

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 15,կետ 6*

**Հարց 77**

*Ո՞վ է պատասխանատու դպրոցական տարիքի երեխային ուսումնական հաստատություն ընդգրկելու համար՝*

- Ծնողը՝ օրենքով սահմանված կարգով:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.16,կետ 5*

**Հարց 78**

*Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում առանձին առարկաների դասաժամերին դասարանը խմբերի բաժանելու կարգը՝*

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.17, կետ 3*

**Հարց 79**

*Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում ուսումնական հաստատության շրջանավարտին տրվող ավարտական փաստաթղթերի ձևերը՝*

- ՀՀ Կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.18, կետ 3*

**Հարց 80**

*Ո՞ր իրավական ակտերով են սահմանվում ուսումնական հաստատություններում սովորողների իրավունքներն ու պարտականությունները՝*

- Օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.20, կետ 1*

### *Հարց 81*

*Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը, որակավորման փարակարգերը, աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման, կենսաթոշակների նշանակման, բժշկական զննության կազմակերպման կարգերը՝*

- ՀՀ Կառավարությունը

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.24,կետ 1*

### *Հարց 82*

*Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում ուսումնական հաստատության աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները՝*

- ՀՀ կառավարությունը

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.25, կետ 1*

### *Հարց 83*

*Պետական ուսումնական հաստատության մեկ դրույքով պաշտոնավարող վարչական աշխատողը համապատասխան որակավորման դեպքում համատեղության կարգով շաբաթական մինչև քանի՞ դասաժամ կարող է ունենալ՝*

- Ութ դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.25, կետ 4*

### *Հարց 84*

*Պետական ուսումնական հաստատության կես դրույքով պաշտոնավարող վարչական աշխատողը համապատասխան որակավորման դեպքում համատեղության կարգով շաբաթական մինչև քանի՞ դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն կարող է ունենալ՝*

- Տասնչորս դասաժամ ուսումնական ծանրաբեռնվածություն:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ.25, կետ 4, 2-րդ պարբերություն*

### *Հարց 85*

*Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում ուսուցչի ատեստավորման կարգը՝*

- ՀՀ կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 26, մաս 5*

### *Հարց 86*

*Յուրաքանչյուր փարի ուսումնական հաստատության ուսուցիչների ո՞ր մասն է ենթակա ատեստավորման՝*

- Մեկ հինգերորդը՝ ըստ ուսումնական հաստատության հաստատած ժամանակացույցի:

*“Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 26, մաս 3*

**Հարց 87**

*Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչը ո՞ր մարմնի միջոցների հաշվին է նախապես անցնում է պարտադիր վերապատրաստում՝*

- Ուսումնական հաստատության:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 8*

**Հարց 88**

*Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում ուսուցչի ատեստավորմանը ներկայացվող փաստաթղթերի ամբողջական ցանկը՝*

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 26, մաս 10*

**Հարց 89**

*Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչը ե՞րբ է տեղեկացվում փաստաթղթային ատեստավորման անցկացման ժամկետի մասին՝*

- Ոչ ուշ, քան երեք ամիս առաջ:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 26, մաս7*

**Հարց 90**

*Ուսուցիչը ատեստավորման արդյունքները ի՞նչ ժամկետում և ո՞ր մարմիններին կարող է բողոքարկել՝*

- Ատեստավորման հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել հնգօրյա ժամկետում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմին կամ դատական կարգով:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 18

**Հարց 91**

*Ե՞րբ կարող է ատեստավորվել հղի և մինչև երեք տարեկան երեխայի համար արձակուրդում գտնվող ուսուցիչը՝*

- Արձակուրդից վերադառնալուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե նա ավելի վաղ ատեստավորվելու հայտ չի ներկայացրել:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 26, մաս25

**Հարց 92**

*Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակ ճանաչված ուսուցիչը ենթակա է ատեստավորման՝*

- Աշխատանքի ներկայանալուց հետո՝ չորսամսյա ժամկետում:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 26, մաս26

**Հարց 93**

*Ո՞ր դեպքում ուսուցիչը իր նախաձեռնությամբ կարող է մասնակցել ատեստավորման՝*

- *Եթե ինքնուրույն կուտակել է համապատասխան կրեդիտներ, ունի աշխատանքային բնութագիր, երկու տարվա մանկավարժական ստաժ, որից առնվազն մեկ տարին՝ տվյալ ուսումնական հաստատությունում:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 26,մաս 23*

**Հարց 94**

*Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության նշանակման կարգը՝*

- ՀՀ կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 29, կետ 1.6*

**Հարց 95**

*Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում պետական ուսումնական հաստատության ատեստավորման միջոցով որակավորում ստացած մանկավարժական աշխատողներին հավելավճար տալու կարգը՝*

- ՀՀ կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 29, կետ 1.14*

**Հարց 96**

*Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման կարգը՝*

- ՀՀ կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 29, կետ 1.8*

**Հարց 97**

*Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում հանրակրթության պետական չափորոշիչը՝*

- ՀՀ կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 29, կետ 3*

**Հարց 98**

*Ուսումնական հաստատության ուսուցիչ կարող է լինել այն անձը, ով՝*

- *Ստացել է մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի*

*բարձրագույն կրթություն և վերջին 10 տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 26 մաս1*

**Հարց 99**

*Նշվածներից ո՞ր մարմինն է հաստատում սովորողների անհատական ուսուցման, ինչպես նաև դրսեկության ձևով հանրակրթության կազմակերպման կարգերը՝*

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 30, կետ 1.19

**Հարց 100**

*Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում և հաստատում ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը՝*

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 30, կետ 1. 21*

**Հարց 101**

*Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում մանկավարժական աշխատողների և տնօրենի վերապատրաստման բովանդակությանը ներկայացվող պահանջները՝*

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 30, կետ 1.22*

**Հարց 102**

*Նշվածներից ո՞ր մարմինն է ապահովում պետական ուսումնական հաստատություններին օգտագործման իրավունքով հանձնված շենքերի կառուցումը, շահագործումը և պահպանումը՝*

- Տարածքային կառավարման մարմինը՝ մարզպետը, իսկ Երևան քաղաքում՝ քաղաքապետը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 31, կետ 1.4*

**Հարց 103**

*Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում ուսումնական հաստատության գործունեությանը տրվող ներքին և արտաքին գնահատման չափանիշները և իրականացման կարգը՝*

- ՀՀ կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդվ. 34, կետ 1*

**Հարց 104**

*Նշվածներից ո՞ր մարմնի իրականացրած պեսչական ստուգումների արդյունքներն են օգտագործվում արտաքին գնահատման ընթացքում՝*

- Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 34, կետ 8*

**Հարց 105**

*Նշվածներից ո՞ր մարմինն է սահմանում ուսումնական հաստատություններին պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը՝*

- ՀՀ կառավարությունը:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 35, կետ 2*

**Հարց 106**

*Հանրակրթության համակարգի պետական ուսումնական հաստատությունների գործունեության կարիքների համար ամենամյա համապատասխան բյուջետային հատկացումների երաշխավորողը հանդիսանում է՝*

- Պետությունը :

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 37, կետ 1*

**Հարց 107**

*Ինչպե՞ս է սահմանվում <<Հանրակրթական դպրոց>> հասկացությունը՝*

- *Մեկ կամ մի քանի ընդհանուր, այդ թվում՝ հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցմամբ հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 3 , կետ 8*

**Հարց 108**

*Ինչպե՞ս է սահմանվում <<Մասնագիտացված հանրակրթական դպրոց>> հասկացությունը՝*

- *Ռազմագիտության, սպորտի, արհեստների, արվեստի կամ գիտության որևէ բնագավառում հանրակրթական հիմնական մասնագիտացված ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 3, կետ 9*

**Հարց 109**

*Ինչպե՞ս է սահմանվում <<Հատուկ հանրակրթական դպրոց>> հասկացությունը՝*

- *Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորող սովորողների համար հանրակրթական հիմնական ընդհանուր և (կամ) հանրակրթական հիմնական հատուկ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության տեսակ:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 3, կետ 10*

**Հարց 110**

*Ինչպե՞ս է սահմանվում «Մանկավարժական աշխատող» հասկացությունը՝*

- *Սովորողների կողմից հանրակրթական ծրագրերի յուրացմանը նպաստող և (կամ) կրթության բովանդակության պահանջները ապահովող ուսումնական հաստատության, ինչպես նաև մանկավարժահոգեբանական կենտրոնների աշխատակից:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 3, կետ 12*

**Հարց 111**

*Ինչպե՞ս է սահմանվում «Ուսուցիչ» հասկացությունը՝*

- *Ուսումնական հաստատությունում սովորողների կողմից առարկայական ծրագրերի յուրացումը դասապրոցեսի միջոցով ապահովող և այդ գործընթացի համար անմիջականորեն պատասխանատու մանկավարժական աշխատող:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 3, կետ 13*

**Հարց 112**

*Քանի՞ տոկոսից պակաս չի կարող լինել ավագ դպրոցում ուսումնական բնագավառներին հատկացվող պարտադիր նվազագույն ժամաքանակը՝*

- *30 տոկոսից պակաս:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 6-րդ հոդվ., մաս 5*

**Հարց 113**

Ո՞րն է տարրական կրթությունը՝

- Պարտադիր կրթության առաջին մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին աստիճանը:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդվ., մաս 2

**Հարց 114**

Ո՞րն է հիմնական կրթությունը՝

- Պարտադիր կրթության երկրորդ մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի առաջին և երկրորդ աստիճանները:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդվ., մաս 3

***Հարց 115***

Ո՞րն է միջնակարգ կրթությունը՝

- Հանրակրթության երրորդ մակարդակ, որը ներառում է հանրակրթական հիմնական ծրագրերի երեք աստիճանները:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 3-րդ հոդվ., մաս 4

***Հարց 116***

Ուսումնական հաստատությունը կարող է մրցութային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում հետևյալ նպատակով՝

- Իրականացնել արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների համար հատուկ կամ լրացուցիչ կրթական ծրագրեր:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 35-րդ հոդվ., մաս 4.1

***Հարց 117***

Ուսումնական հաստատությունը կարող է մրցութային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում հետևյալ նպատակով՝

- Իրականացնել ուսումնամեթոդական գիտափորձ և (կամ) այլընտրանքային ծրագիր:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 35-րդ հոդվ., մաս 4.2

***Հարց 118***

Ուսումնական հաստատությունը կարող է մրցութային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում հետևյալ նպատակով՝

- Կազմակերպել դպրոցականների միջազգային օլիմպիադաների նախապատրաստական հավաքներ և դասընթացներ:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 35-րդ հոդվ., մաս 4.3

***Հարց 119***

Ուսումնական հաստատությունը կարող է մրցութային հիմունքներով պետական բյուջեից ստանալ լրացուցիչ ֆինանսավորում հետևյալ նպատակով՝

- Ստեղծել ուսումնամեթոդական ձեռնարկներ և ուսումնական նյութեր (այդ թվում՝ էլեկտրոնային):

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, 35-րդ հոդվ., մաս 4.4

**Հարց 120**

*Ի՞նչ նպատակով է նախատեսած հանրակրթական պետական ծրագրի օրինակելի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչին հատկացված ժամաքանակը՝*

- *Հոսքային կամ առանձին առարկաների խորացված կրթական ծրագրերի իրականացման և (կամ) սովորողների նախասիրություններին, ուսումնական հաստատության առանձնահատկություններին, համայնքի կարիքներին համապատասխան կրթություն կազմակերպելու նպատակով:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 7, մաս 5.2*

**Հարց 121**

*Ո՞ր մարմինը կարող է հաստատել այլընտրանքային հանրակրթական հիմնական, այդ թվում՝ փորձարարական, հեղինակային և միջազգային ծրագրեր, որոնք չեն հակասում հանրակրթության պետական չափորոշչին՝*

- *Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 7, մաս 6*

**Հարց 122**

*Միջնակարգ կրթության նորմատիվային ժամկետը՝*

- *12 տարի է՝ եռաստիճան համակարգով՝*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 7, մաս 8*

**Հարց 123**

*Հանրակրթական հիմնական ծրագրերը, որպես անբաժանելի մաս, կարող են ներառել՝*

- *Սովորողների համար հանրակրթական լրացուցիչ դասընթացների կազմակերպումը՝*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 7, մաս 10.3*

**Հարց 124**

*Ո՞ր մարմինն է սահմանում սովորողների կողմից կրթական ծրագրի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման, սովորողի փոխադրման և ավարտման կարգը՝*

- *Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 16, մաս 10*

### Հարց 125

Նշվածներից ո՞ր կարգապահական տույժը կարող է կիրառվել միջին և ավագ դպրոցների սովորողների նկատմամբ՝ ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում՝

- Նկատողություն:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 21, մաս 2.1

### Հարց 126

Ո՞ր դեպքում ուսումնական հաստատությունը կարող է միակողմանի լուծել ծնողի հետ կնքած պայմանագիրը՝ այդ մասին տասն օր առաջ գրավոր տեղյակ պահելով ծնողին՝

- Եթե ոչ պետական ուսումնական հաստատության, մասնագիտացված հանրակրթական դպրոցի, ինչպես նաև այլընտրանքային ուսուցման համակարգում սովորողը կամ նրա ծնողը չի պահպանել պայմանագրային դրույթները, կամ սովորողը չի ապահովել կրթության բովանդակությանն ու ծավալի յուրացմանը ներկայացվող նվազագույն պահանջները:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 21, մաս 5

### Հարց 127

Ինչպե՞ս է համալրվում պետական ուսումնական հաստատությունում առաջացած ուսուցչի թափուր տեղը՝

- Պետական ուսումնական հաստատությունում ուսուցչի թափուր տեղ առաջանալու դեպքում այն համալրվում է մրցութային հիմունքներով՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մրցույթի օրինակելի կարգի և ուսումնական հաստատության կանոնադրության, բացառությամբ նպատակային ուղեգրով մասնագիտական կրթություն ստացած թեկնածուի առկայության կամ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատություններ համապատասխան մասնագետ գործուղվելու դեպքում, եթե մինչ այդ առնվազն 2 անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը չի համալրվել:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 24, մաս 3

### Հարց 128

Ինչպե՞ս է անցկացվում ուսուցչի ատեստավորումը՝

- Պարզ ընթացակարգով՝ փաստաթղթային ատեստավորման եղանակով, ուսուցչի ատեստավորման տարածքային հանձնաժողովի կողմից:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 26, մաս 4*

**Հարց 129**

*Ուսումնական հաստատության միջոցները գոյանում են՝*

- *Պետական բյուջեից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 35, մաս 1*

**Հարց 130**

*Ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողը իրավունք ունի՝*

- *Բողոքարկելու ուսումնական հաստատության ղեկավար մարմինների հրամանները, որոշումները և կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 27, մաս 1.4*

**Հարց 131**

*Ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողը իրավունք ունի՝*

- Մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 27, մաս 1.1*

**Հարց 132**

*Ինչպե՞ս է սահմանվում հեռավար (դիստանցիոն) կրթություն հասկացությունը՝*

- *Կրթական ծրագրի իրականացման ձև, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով, սակայն հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով՝ բացառիկ դեպքերում և որոշակի ժամկետով.*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 3, մաս 1.6.1*

**Հարց 133**

*Ինչպե՞ս է սահմանվում «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» հասկացությունը՝*

- Ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է սովորող երեխային, նրա ծնողին և մանկավարժական աշխատողին:

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 3, մաս 10.4*

***Հարց 134***

*Ինչպե՞ս է սահմանվում «Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում» հասկացությունը՝*

- *Անձի կրթական ծրագրերին մասնակցության դիտարկում, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտում և կրթության առանձնահատուկ անհրաժեշտ պայմանների սահմանում:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 3, մաս 10.5*

***Հարց 135***

*Ինչպե՞ս է սահմանվում «ֆինանսավորման բարձրացված չափաքանակ» հասկացությունը՝*

- **Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նվազագույն ֆինանսավորման չափ, որն անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման համար:**

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 3, մաս 10.7)*

***Հարց 136***

*Ինչպե՞ս է սահմանվում «Անհատական ուսուցման պլան» հասկացությունը՝*

- Հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հիման վրա կազմված փաստաթուղթ, որը սահմանում է սովորողի կրթության կազմակերպման տարեկան նպատակը, խնդիրները և դրանց հասնելու գործողությունները (ներառյալ՝ աջակցող ծառայությունները):

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 3, մաս 10.8*

***Հարց 137***

*Կրթության ո՞ր մակարդակն է պարտադիր Հայաստանի Հանրապետությունում՝*

- *Միջնակարգ կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:*

*«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 4, մաս 4*

## ***«Լեզվի մասին» ՀՀ օրենք***

***Հարց 138***

*Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են՝*

- Գործավարությունը կատարել գրական հայերենով՝ ապահովելով հայոց լեզվի անաղարտությունը, ամրագրված լեզվական կանոնները:

«Լեզվի մասին» ՀՀ օրենք հոդվ. 4. ա

**Հարց 139**

*Հայաստանի Հանրապետության տարածքում օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատություն կարող է հիմնել՝*

- *Միայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը:*

*«Լեզվի մասին» ՀՀ օրենք հոդվ. 2*

## <<ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ>> ՀՀ ՕՐԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Հարց 140**

*Տեսչական մարմինը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարում է՝*

- *Օրենքով:*

*<<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենք, հոդված 5, 2.*

**Հարց 141**

*Նշվածներից ո՞ր մարմնին է հաշվետու տեսչական մարմնի ղեկավարը՝*

- *Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Հայաստանի Հանրապետության վարչապետին և Խորհրդին:*

*<<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենք, հոդված 8, 2.*

**Հարց 142**

*Տեսչական մարմնի ղեկավարին պաշտոնից ազատում է՝*

- *Հայաստանի Հանրապետության վարչապետը:*

*<<Տեսչական մարմինների մասին>> ՀՀ օրենք, հոդված 8, 1.*

**Հարց 143**

*Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմինը՝*

- *Վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա մարմին է, որն*

*օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ կրթության բնագավառում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:*

ՀՀ վարչապետի2018 թ. հունիսի 11-ի
N 729-Լ որոշում,կետ 1

### Հարց 144

*Տեսչական մարմինը՝*

- *Ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարում է օրենքով:*

*ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի*
*N 729-Լ որոշում,կետ 2*

### Հարց 145

*Տեսչական մարմնի նպատակն է՝*

- *Օրենքով սահմանված դեպքերում և կարգով նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը, կրթության որակի բարձրացումը և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցումը:*

*ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի*
*N 729-Լ որոշում,կետ 8*

### Հարց 146

*Տեսչական մարմնի խնդիրներն են՝*

- *Նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև նշված ոլորտներում կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:*

*ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի*
*N 729-Լ որոշում,կետ 9*

***Հարց 147***

*Ո՞վ է հաստատում տեսչական մարմնի կանոնադրությունը,այդ թվում կառուցվածքը,և դրանցում կատարում փոփոխություններ*

- *Վարչապետը*

*ՀՀ վարչապետի 2018 թ. հունիսի 11-ի*
*N 729-Լ որոշում,կետ 12.1*

## *«Երեխայի իրավունքների մասին»*

***Հարց 148***

*Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի՝*

- *Հաղորդակցվելու իր ժողովրդի պատմությանը, ավանդույթներին, հոգևոր արժեքներին և համաշխարհային մշակույթին:*

*«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք,*
*հոդվ. 18, պարբ. 1*

***Հարց 149***

*Որտե՞ղ է հիմնականում իրականացվում երեխայի խնամքը և դաստիարակությունը՝*

- Ընտանիքում:

*«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք,*
*հոդվ. 13, պարբ. 1*

***Հարց 150***

*Ո՞վ է երեխայի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն կրում՝*

- Ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչներ:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ
օրենք, հոդվ. 14, պարբ. 2

***Հարց 151***

*Երեխայի հետ ո՞ր տարիքից կարելի է կնքել աշխատանքային պայմանագիր՝*

- Երեխայի հետ աշխատանքային պայմանագիր կարող է կնքվել 16 տարին լրանալուց հետո, բացառությամբ ժամկետային աշխատանքային պայմանագրերի:

*«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 19, պարբ. 2*

**Հարց 152**

*Մինչև ո՞ր տարիքը լրանալն է արգելվում երեխայի մասնակցությունը ռազմական գործողություններին՝*

- Մինչև 15 տարին:

*«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 29, պարբ. 2*

**Հարց 153**

*ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, երեխային քրեական պատասխանատվության ենթարկելիս փաստաբանի (հոգեբանի, մանկավարժի) ներկայությունը պարտադիր է՝*

- Հետաքննության, նախաքննության և դատաքննության ընթացքում:

*«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդվ. 31, պարբ. 5*

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «Նախադպրոցական կրթության մասին»*

**Հարց 154**

*Ինչպե՞ս է սահմանվում «Նախադպրոցական կրթություն» հասկացությունը՝*

- նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի մտավոր, ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման, դաստիարակության, ուսուցման և խնամքի գործընթաց, որը համարվում է հանրակրթության սկզբնական աստիճան և իրականացվում է նախադպրոցական կրթության ծրագրով:

*«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 3, կետ մաս 1.1*

**Հարց 155**

*Ո՞ր տարիքի երեխաներն են ընդգրկվում նախադպրոցական ուսումնական հաստատություն՝*

- Որոնց նախադպրոցական տարիքը լրացել կամ լրանում է տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ

*«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք,*
*հոդվ. 6, մաս 1*

***Հարց 156***

*Նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների փարիքային հենքի հիման վրա ձևավորվող ավագ խմբում ընդգրկվում են՝*

- 5-ից մինչև 6 տարեկան երեխաները:

*«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք,*
*հոդվ. 6, մաս 2.6*

***Հարց 157***

*Ինչպիսի՞ կարգավիճակ ունեն պետական և համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունները՝*

- Պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունները ոչ առևտրային կազմակերպություններ են:

*«Նախադպրոցական կրթության մասին»ՀՀ օրենք,*
*հոդվ. 21, մաս 2*

***Հարց 158***

*Ինչպիսի՞ կարգավիճակ ունեն ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունները՝*

- Ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունները կարող են ունենալ օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպական-իրավական ձև:

*«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք,*
*հոդվ. 21, մաս 3*

***Հարց 159***

*Ո՞րն է նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթուղթը՝*

- Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած օրինակելի կանոնադրության հիման վրա հիմնադրի (հիմնադիրների) կողմից հաստատած կանոնադրությունը:

*«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք, հոդվ. 21, մաս 4*

**«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման» կարգ**

***Հարց 160***

Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման դպրոցական մակարդակում աջակցության խմբի կազմում ընդգրկվում են՝

- Հաստատության ուսուցչի օգնականը(ները), հատուկ մանկավարժը(ները), հոգեբանը, սոցիալական մանկավարժը և բուժքույրը: Եթե հաստատությունում չկան նշված մասնագետները, ապա նրանք հրավիրվում են տվյալ հաստատությունը սպասարկող Տարածքային կենտրոնից:

«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման» կարգը,կետ 7

***Հարց 161***

Ո՞վ է հաստատում և ու՞մ է տրամադրում սովորողին տրամադրվող աջակցող ծառայությունների ժամանակացույցը՝

- Հաստատում է տնօրենը և պատճենը տրամադրում սովորողի ծնողին:

«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման» կարգը,կետ 8.2

***Հարց 162***

Ե՞րբ և օրական քանի՞ ժամ է տրամադրվում աջակցող ծառայությունները սովորողին՝

- Աջակցող ծառայությունները սովորողին տրամադրվում են դասերից հետո՝ ըստ որոշված ծավալի և տևողության, սակայն օրական 1,5 ժամից ոչ ավելի:

«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման» կարգը,կետ 9

***Հարց 163***

*Սովորողի ԱՈՒՊ-ով նախատեսված արդյունքների ամփոփումն իրականացվում է՝*

- *Կիսամյակի ավարտին՝ նկարագրական թեսթով, որը սովորողի առաջադիմության թերթիկի հետ միասին տրամադրվում է ծնողին:*

*«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, հոդվ. 12, 1-4*

**«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման)» կարգ**

**Հարց 164**

*Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում Հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը՝խորհուրդը ի՞նչ ժամկետում է որոշում ընդունում տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին՝*

- Երեք աշխատանքային օրվա ընթացքում:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման)» կարգ, կետ 2.2.*

**Հարց 165**

*Հաստատության տնօրենի թափուր պաշտոն առաջանալու օրվանից խորհուրդն ի՞նչ ժամկետում է կազմակերպում և անցկացնում տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթը՝*

- Առավելագույնը եռամսյա ժամկետում:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման)» կարգ, կետ 3*

**Հարց 166**

*Հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ հայտարարելու մասին խորհրդի որոշման պատճենը գրավոր ո՞վ է ներկայացնում լիազորված մարմին՝*

- Խորհրդի նախագահը:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման) »կարգ, կետ 4*

**Հարց 167**

*Լիազորված մարմինը ի՞նչ ժամկետում է խորհրդին գրավոր ներկայացնում տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին խորհրդի որոշման վերաբերյալ իր առարկությունները և առաջարկությունները՝*

- Հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության* տնօրենի ընտրության(նշանակման) »կարգ, կետ 4

**Հարց 168**

*Ե՞րբ է նշանակվում ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթը՝*

- Փաստաթղթերի ընդունման ավարտից հետո յոթերորդ աշխատանքային օրը:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման) »կարգ, կետ 7*

***Հարց 169***

*Ո՞վ է անցկացնում ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթը՝*

- Խորհուրդը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման) »կարգ, կետ 13*

***Հարց 170***

Ե՞րբ է համարվում խորհրդի նիստը իրավազոր՝

- Եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամներից առնվազն 6-ը:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման) »կարգ, կետ 17*

***Հարց 171***

*Տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում լիազորված մարմինը ու՞մ չի կարող նշանակել տնօրենի պաշտոնակատար՝*

- Տվյալ հաստատության խորհրդի անդամին:

«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության *տնօրենի ընտրության(նշանակման) »կարգ, կետ 2.1*

***Հարց 172***

*Խորհուրդը որտե՞ղ է ընդունում տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի հայտը՝*

- Մրցույթ հայտարարած հաստատությունում:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման) »կարգ, կետ 8*

***Հարց 173***

*Հաստատության տնօրենի պաշտոնակատարը ի՞նչ տեղեկատվություն է պարտավոր տրամադրել հավակնորդներին՝*

- Տվյալ հաստատության զարգացման ծրագիր կազմելու համար անհրաժեշտ տեղեկատվություն՝ հաստատության գործունեության վերաբերյալ:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման)» կարգ,կետ 12*

***Հարց 174***

*Ինչպիսի՞ լիազորություն չունի մրցույթին մասնակցող նախարարության ներկայացուցիչը՝*

- Քվեարկելու իրավունք:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման)» կարգ, կետ 16*

***Հարց 175***

**Մրցույթի արդյունքները ի՞նչ կարգով են չեղյալ ճանաչվում՝**

- Դատական կարգով

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման)» կարգ, կետ 29,1 ենթ.*

***Հարց 176***

*Եթե խորհրդի նիստն իրավազոր չէ, ո՞ր մարմնի որոշմամբ, քանի՞ օրով և քանի՞ անգամ կարող է հետաձգվել մրցույթը՝*

- Խորհրդի որոշմամբ, մեկ անգամ և ոչ ավելի, քան հինգ աշխատանքային օրով:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման)» կարգ, կետ 18*

***Հարց 177***

Ո՞վքեր են ընդգրկվում հանձնաժողովի կազմում՝

- ՀՀ կրթության և գիտության նախարարության, լիազորված մարմնի մասնագետները և տեղական ինքնակառավարման մարմնի լիազոր ներկայացուցիչը:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման) »կարգ,կետ 30,1-ին ենթ.*

***Հարց 178***

Ե՞րբ է հայտարարվում նոր մրցույթ՝

- Եթե հավակնորդներից ոչ մեկը չի ներկայացել մրցույթի:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման)» կարգ, կետ 19*

***Հարց 179***

*Խորհրդի նախագահը հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթ հայտարարելու մասին խորհրդի որոշման պատճենը քանի՞ աշխատանքային օրվա ընթացքում է գրավոր ներկայացնում լիազորված մարմին:*

- *Երեք աշխատանքային օրվա ընթացքում:*

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման)» կարգ, կետ 4*

**Հարց 180**

*Ի՞նչ կարգավիճակով է մասնակցում տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին ՀՀ մարզպետի (Երևանի քաղաքապետի)՝ խորհրդի անդամ չհանդիսացող ներկայացուցիչը՝*

- Դիտորդի կարգավիճակով:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման)» կարգ, կետ 20*

**Հարց 181**

*Ի՞նչ կարգավիճակով են կրթության ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները մասնակցում ընտրությանը՝*

- Դիտորդի կարգավիճակով:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման)» կարգ, կետ 21*

**Հարց 182**

Ինչպե՞ս է խորհուրդն անցկացնում տնօրենի պաշտոնի համար հայտարարված մրցույթը՝

- Հարցազրույցի միջոցով:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման)» կարգ, կետ 24*

**Հարց 183**

Ո՞ւմ կողմից է արձանագրվում և ո՞ւմ ստորագրությամբ է վավերացվում մրցույթի ընթացքը՝

- Արձանագրվում է խորհրդի քարտուղարի կողմից, վավերացվում է խորհրդի նախագահի ստորագրությամբ:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության* տնօրենի ընտրության(նշանակման)» կարգ, կետ 25

**Հարց 184**

Հարցազրույցի ժամանակ ինչպիսի հարցեր են տրվում հավակնորդին՝

- Իր կողմից ներկայացված զարգացման ծրագրից:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության* տնօրենի ընտրության(նշանակման)» կարգ, կետ 24)

**Հարց 185**

*Բողոքի դեպքում քանի աշխատանքային օրվա ընթացքում է ձևավորվում Հանձնաժողով՝*

- Բողոքը նախարարություն մուտքագրելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման) »կարգ,կետ 30*

**Հարց 186**

*Լիազորված մարմինն ընտրված տնօրենի հետ քանի օրվա ընթացքում է կնքում աշխատանքային պայմանագիր և քանի տարի ժամկետով՝*

- *10 աշխատանքային օրվա ընթացքում՝5 տարի ժամկետով:*

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման)» կարգ, կետ 34*

**Հարց 187**

*Ո՞ր դեպքերում և ի՞նչ կարգով կարող են դադարեցվել տնօրենի լիազորությունները՝*

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման)» կարգ, կետ 36*

**Հարց 188**

*Հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը որտեղ և ինչ պարբերականությամբ է հրապարակվում՝*

- *Զանգվածային լրատվության միջոցներով (հանրապետական կամ տեղական ռադիո, հեռուստատեսություն, մամուլ) հնգօրյա պարբ.երականությամբ՝ առնվազն երկու անգամ, ինչպես նաև azdarar.am կայքում:*

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ, կետ 6*

**Հարց 189**

*Կառավարման (պետական կամ տարածքային), ո՞ր մարմինն է խորհրդի կողմից ներկայացված հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում իր պաշտոնական ինտերնետային կայքում՝*

- Կրթության կառավարման պետական լիազորված մարմինը:

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման) կարգ, կետ 6.1*

**Հարց 190**

*Ե՞րբ է հայտարարվում նոր մրցույթ և կրկնակի քվեարկություն չի անցկացվում՝*

- *Եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ հավակնորդ և մրցույթում հաղթող չի ճանաչվել:*

*«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման)» կարգ, կետ 28*

**«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգ**

***Հարց 191***

*Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում խորհուրդը քանի՞ անդամից է կազմված՝*

- Ութ:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգ, կետ 2*

***Հարց 192***

*Ո՞վ կամ ո՞վքեր են հանրակրթական ուսումնական հաստատությունում առաջադրում կառավարման խորհրդի անդամներին՝*

- ՀՀ կրթության և գիտության նախարարը, լիազորված մարմինը, մանկավարժական խորհուրդը, ծնողական խորհուրդը:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգ, կետ 4*

***Հարց 193***

Մարզային և Երևանի քաղաքապետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում ՀՀ կրթության և գիտության նախարարը խորհրդի քանի՞ անդամ է առաջադրում՝

- Մեկ անդամ:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգ, կետ 5*

***Հարց 194***

Նախարարության ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ ՀՀ կրթության և գիտության նախարարը խորհրդի քանի՞ անդամ է առաջադրում՝

- Երեք անդամ:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝* խորհրդի ձևավորման» կարգ, կետ 6

***Հարց 195***

Նախարարության ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում Հայաստանի Հանրապետության մարզերում՝ մարզպետը, Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետը Խորհրդի քանի՞ անդամ են առաջադրում՝

- Մեկ անդամ:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգ, կետ 6*

***Հարց 196***

Քանի՞ անդամ է առաջադրում Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ հանրակրթական ուսումնական հաստատությունների Խորհուրդներում Երևանի քաղաքապետը՝

- Երեք անդամ:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգ, կետ 8*

***Հարց 197***

ՀՀ մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում մարզպետը Խորհրդի քանի՞ անդամ է առաջադրում՝

- Խորհրդի երեք անդամ, որոնցից մեկին ներկայացնում է տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգ, կետ 7*

***Հարց 198***

Հանրակրթական ուսումնական հաստատության ծնողական խորհուրդն իր կազմից փակ քվեարկությամբ Խորհրդի քանի՞ անդամ է ընտրում՝

- Երկու անդամ:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական*
**հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝**
**խորհրդի ձևավորման» կարգ, կետ 11**

***Հարց 199***

Քանի՞ տարվա մանկավարժական գործունեության ստաժ է պահանջվում հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի կողմից խորհրդի անդամ ընտրվելու համար՝

- Երեք տարվա:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հասփապրության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգ,կետ 9*

***Հարց 200***

Հանրակրթական ուսումնական հաստատության Խորհրդի նախագահի ընտրությունը չկայանալու դեպքում ի՞նչ ժամկետում է անցկացվում կրկնակի քվեարկությունը՝

- Եռօրյա ժամկետում:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հասփապրության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգ, կետ 19.1*

***Հարց 201***

Հանրակրթական ուսումնական հաստատության Խորհրդի նախագահի ընտրության կրկնակի քվեարկությամբ ընտրությունը չկայանալու դեպքում, ո՞ր թեկնածուն է համարվում ընտրված՝

- Առավել ձայն ստացած թեկնածուն:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հասփապրության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգ, կետ 19.2*

***Հարց 202***

Ո՞վ է վարում հանրակրթական ուսումնական հաստատության Խորհրդի առաջին նիստը՝

- Տարիքով ավագ խորհրդի անդամը:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հասփապրության կոլեգիալ կառավարման մարմնի՝*

*խորհրդի ձևավորման» կարգ, կետ 18*

***Հարց 203***

Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենը կարո՞ղ է լինել տվյալ հստատության խորհրդի կազմում՝

- Չի կարող:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական*
*հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝*
խորհրդի ձևավորման» կարգ, կետ 16

***Հարց 204***

Հանրակրթական ուսումնական հաստատության Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման դեպքում նրան առաջադրող մարմինը ի՞նչ ժամկետում է առաջադրում նոր թեկնածու՝

- 20 օրյա ժամկետում:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական*
*հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝*
*խորհրդի ձևավորման» կարգ, կետ 15*

***Հարց 205***

Հանրակրթական ուսումնական հաստատության Խորհրդի անդամի լիազորությունները, լիազորությունների դադարեցման հիմքերը, պարտավորությունները սահմանվում են՝

- ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական*
*հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝*
*խորհրդի ձևավորման» կարգ,կետ 13*

***Հարց 206***

Խորհուրդը փակ քվեարկությամբ ընտրում է խորհրդի նախագահի՝

- խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական*
**հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝**

**խորհրդի ձևավորման» կարգ, կետ 19**

***Հարց 207***

Տվյալ հանրակրթական ուսումնական հաստատությունում առնվազն 3 տարվա մանկավարժական գործունեության ստաժի պայմանը ո՞ր դեպքում չի տարածվում մանկավարժական խորհրդի կազմից հաստատության Խորհրդի անդամ ընտրելու ժամանակ՝

- 3 տարուց պակաս գործող հաստատության Խորհրդի անդամ ընտրելիս:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգ, կետ 10*

***Հարց 208***

Ո՞վ չի կարող առաջադրվել հաստատության խորհրդի կազմում՝

- Հաստատության խորհրդի կազմում ՀՀ կրթության և գիտության նախարարության, լիազորված մարմնի և ծնողական խորհրդի կողմից չի կարող առաջադրվել տվյալ ուսումնական հաստատությունում սովորողի այն ծնողը, ով միաժամանակ հանդիսանում է տվյալ հաստատության մանկավարժ:

*«ՀՀ Պետական հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգ 11, կետ 10*

## ***«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի» կարգ***

***Հարց 209***

Հանրակրթական ուսումնական հաստատությունում ո՞ր աշխատատեղն է համարվում թափուր՝

- Մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկով և տվյալ հաստատության տարիֆիկացիոն ցուցակով նախատեսված ուսուցչի չզբաղեցված աշխատատեղը:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 2*

**Հարց 210**

Հանրակրթական ուսումնական հաստատությունում թափուր մնացած պաշտոնի առկայության դեպքում մրցույթ չի հայտարարվում, եթե՝

- Տեղը թափուր է ժամանակավորապես (աշխատողի՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու կամ հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդի, ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում):

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 9, 1-ին ենթ.*

**Հարց 211**

*Քանի՞ փուլով է անցկացվում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթը՝*

- *Երկու փուլով՝ գրավոր և բանավոր:*

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ,կետ 30*

**Հարց 212**

*Ե՞րբ է նշանակվում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի անցկացման օր՝*

- Փաստաթղթերի ընդունման ավարտից ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ,կետ 14*

**Հարց 213**

*Նշվածներից ո՞ր մարմինն է մշակում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի գրավորի և բանավոր փուլի առաջադրանքները՝*

- ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ՝ կետ30*

**Հարց 214**

*Քանի՞ անդամից է կազմված հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցութի հանձնաժողովը՝*

- 5 անդամից:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի*

*թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 21*

***Հարց 215***

*Ո՞վ է հաստատում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցութային հանձնաժողովի անվանական կազմը՝*

- Հաստատության տնօրենը:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 20*

***Հարց 216***

*Ի պաշտոնե ո՞վ է հանդիսանում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի* թափուր տեղի համար մրցութային հանձնաժողովի նախագահը՝

- Հաստատության տնօրենը (տնօրենի պաշտոնակատարը):

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 22*

***Հարց 217***

*Ե՞րբ է հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցութային հանձնաժողովը համարվում իրավազոր՝*

- Եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի առնվազն 4 անդամ:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 23*

***Հարց 218***

*Քանի՞ ձայնով են ընդունվում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցութային հանձնաժողովի որոշումները՝*

- Առնվազն 3 կողմ ձայնով:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 24*

***Հարց 219***

*Ո՞վ է բացատրում հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի գրավոր փուլի անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը և պատասխանում մասնակիցների հարցերին՝*

- Հանձնաժողովի քարտուղարը:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 35*

***Հարց 220***

**Որքա՞ն է գրավոր առաջադրանքի համար տրվող ժամանակը՝**

- **120 րոպե**

**«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի**

*թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 40*

***Հարց 221***

*Ու՞մ կողմից են կազմվում գրավոր փուլի համար թեսփային առաջադրանքները՝*

- Յուրաքանչյուր դպրոց կազմում է թեստային առաջադրանք՝ բաղկացած ՀՀ ԿԳՆ հաստատած Հարցաշարի 100 հարցից:

«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի
թափուր տեղի համար մրցույթի» կարգ,կետ 31

***Հարց 222***

Բանավոր փուլի ժամանակ մասնակիցը հարցաշարից վիճակահանությամբ քանի հարց է ընտրում՝

- 5 հարց:

*‚Հանրակրթական ուսումնական հասփափության ուսուցչի
թափուր փեղի համար մրցույթի» կարգ, կեփ 48*

***Հարց 223***

Ե՞րբ է մասնակիցը համարվում է հարցազրույցի փուլը հաղթահարած՝

- Եթե ճիշտ է պատասխանել հարցազրույցի հարցատոմսի 5 հարցերից առնվազն երեքին և հարակից հարցերի (այդպիսիք լինելու դեպքում) գերակշիռ մասին:

*«Հանրակրթական ուսումնական հասփափության ուսուցչի
թափուր փեղի համար մրցույթի» կարգ, կեփ 52*

***Հարց 224***

*Ե՞րբ է մասնակիցը համարվում գրավոր փուլը է հաղթահարված՝*

- *Առաջադրանքների առնվազն 90 % ճիշփ պափասխանելու դեպքում:*

*«Հանրակրթական ուսումնական հասփափության ուսուցչի
թափուր փեղի համար մրցույթի» կարգ, կեփ 41*

***Հարց 225***

*Հանրակրթական ուսումնական հասփափության ուսուցչի թափուր փեղի համար մրցույթի գրավոր փուլի արդյունքները ե՞րբ կարող են բողոքարկվել մրցութային հանձնաժողովին՝*

- Մրցույթի մասնակիցների կողմից հավաքած միավորների հրապարակումից հետո՝ 1 ժամվա ընթացքում:

*«Հանրակրթական ուսումնական հասփափության ուսուցչի
թափուր փեղի համար մրցույթի» կարգ, կեփ 45*

***Հարց 226***

*Հանրակրթական ուսումնական հասփափության ուսուցչի թափուր փեղի համար մրցույթի ո՞ր մասնակիցն է մրցույթում հաղթող ճանաչվում՝*

- Ով քվեարկության արդյունքում հավաքել է Հանձնաժողովի քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայները:

«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի
*թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 59*

**Հարց 227**

*Եթե հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթում հաղթող ճանաչվածների դիմումների քանակը ավելին է, քան թափուր աշխատատեղերը, ո՞վ է կատարում ուսուցչի վերջնական ընտրությունը՝*

- Հաստատության տնօրենը:

*«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի» կարգ, կետ 65*

## *«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք*

**Հարց 228**

Ինչպե՞ս է սահմանվում «անհատական իրավական ակտ » հասկացությունը

- Նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց:

*«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 2,մաս1.5*

**Հարց 229**

**Ինչպե՞ս է սահմանվում «ներքին իրավական ակտ »հասկացությունը**

- Նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն այն անձանց խմբի համար, որոնք դա ընդունող մարմնի հետ աշխատանքային կամ վարչական հարաբերությունների մեջ են կամ օգտվում են դա ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից.

*«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 2,մաս1.6*

**Հարց 230**

Ո՞ր լեզվով են շարադրվում նորմատիվ իրավական ակտերը

- Նորմատիվ իրավական ակտերը շարադրվում են պետական լեզվով՝ հայերենով:

*«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 10.1*

**Հարց 231**

*Նորմատիվ իրավական ակտերով սահմանվող ձևաթղթերը կարող են՝*

- *Շարադրվել օտար լեզվով կամ հայերենով՝ օտար լեզվի զուգորդմամբ:*

*«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 10.3*

**Հարց 232**

*Ինչպե՞ս են հաշվարկվում նորմատիվ իրավական ակտերով սահմանված ժամկետները՝*

- *Նորմատիվ իրավական ակտերով սահմանված ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, օրերով և ժամերով:*

*«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 31.1*

## *ՀՀ քաղաքացիական օրենսգիրք*

**Հարց 233**

Ո՞ր դեպքում է պայմանագիրը համարվում կնքված՝

- Պայմանագիրը համարվում է կնքված, եթե կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ:

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,հոդվ. 448.*

**Հարց 234**

Ովքե՞ր են պատասխանատվություն կրում տասնչորս տարեկան չդարձած անչափահասի փոքրահասակի պատճառած վնասի համար՝

- Պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չեն ապացուցում, որ վնասն անչափահասի փոքրահասակի մեղքով չի պատճառվել:

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,հոդվ.1067*

**Հարց 235**

Ինչպիսի՞ պատասխանատվություն են կրում տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներն իրենց պատճառած վնասի համար՝

- Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներն ընդհանուր հիմունքներով ինքնուրույն պատասխանատվություն են կրում իրենց պատճառած վնասի համար:

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,հոդվ. 1068*

**Հարց 236**

Ովքե՞ր պետք է հատուցեն տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասի պատճառած վնասի համար, եթե նա չունի բավարար եկամուտներ կամ այլ գույք՝

- Վնասը լրիվ կամ պակասող մասով պետք է հատուցեն նրա ծնողները, որդեգրողները կամ հոգաբարձուն, եթե չեն ապացուցում, որ վնասն իրենց մեղքով չի պատճառվել:

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,հոդվ. 1068*

**Հարց 237**

Ի՞նչ է պարտավորվում վարձատուն վարձակալության պայմանագրով՝

- Վարձակալության պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և (կամ) օգտագործմանը հանձնել գույք:

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,հոդվ. 606*

**Հարց 238**

Նշվածներից ո՞րն է վարձակալության պայմանագրին առաջադրվող պահանջներից:

- Վարձակալության պայմանագիրը կնքվում է գրավոր՝

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,հոդվ. 610.1*

**Հարց 239**

Նշվածներից ո՞րն է անշարժ գույքի վարձակալության պայմանագրին առաջադրվող պահանջներից՝

- Անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,հոդվ. 610.2*

**Հարց 240**

Շենքի կամ շինության վարձակալության պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են՝

- Պետական գրանցման:

*ՀՀ քաղաքացիական օրենսգիրք,հոդվ. 655*

## «Գնումների մասին» ՀՀ օրենքի

**Հարց 241**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն պատվիրատու համարվում են՝

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, պետության կամ համայնքների հիմնարկները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված 3-րդ մաս

***Հարց 242***

Նշվածներից ո՞ր է համարվում գնում՝

- Պատվիրատուի հատուցմամբ՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, լիզինգը, պատվիրատուի կողմից նվիրաբերության կարգով իրավաբանական անձանց հատկացվող միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը, փոխանակման ձևով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը, ինչպես նաև պետություն-մասնավոր գործընկերության, ներառյալ հավատարմագրային կառավարման և կոնցեսիայի գործարքների շրջանակներում մասնավոր հատվածի գործընկերոջը իրավունքների շնորհումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված 3-րդ մաս

***Հարց 243***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ նշվածներից ո՞ր մարմինն է համարվում լիազորված մարմին՝

- Պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության պետական մարմինը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված 13-րդ կետ

***Հարց 244***

Ո՞րքան է գնումների բազային միավորը՝

- Մեկ միլիոն ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի  2-րդ հոդված 21-րդ կետ

***Հարց 245***

Նշված գործարքներից ո՞ր տեսակի վրա չի տարածվում «Գնումների մասին» ՀՀ օրենքի գործողությունը՝

- Աշխատանքային պայմանագրերի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի  3-րդ հոդված 4-րդ մաս 1-ին կետ

***Հարց 246***

Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝

- Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի  6-րդ հոդված 3-րդ մաս 1-ին կետ

***Հարց 247***

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ ովքե՞ր իրավունք չունեն մասնակցելու գնումների ընթացակարգերին՝

- Որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի  6-րդ հոդված, 1-ին  մաս, 4-րդ կետ

***Հարց 248***

Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝

- Մասնագիտական փորձառությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված 3-րդ մաս 2-րդ կետ

***Հարց 249***

Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝

- Տեխնիկական միջոցները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված 3-րդ մաս 3-րդ կետ

***Հարց 250***

Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝

- Ֆինանսական միջոցները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված 3-րդ մաս 4-րդ կետ

***Հարց 251***

Նշվածներից ո՞րն է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշը՝ <<Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝

- Աշխատանքային ռեսուրսները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված 3-րդ մաս 5-րդ կետ

***Հարց 252***

Ի՞նչ փաստաթղթով է ձևավորվում գնահատող հանձնաժողովը՝

- Պատվիրատուի ղեկավարի հրամանով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդված 1-ին մաս

***Հարց 253***

Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝

- Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված 1-ին մաս 2

***Հարց 254***

Պատվիրատուն ո՞ր մարմին է ներկայացնում գնումների տարեկան հաշվետվությունը՝

- Լիազորված մարմին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդված 5-րդ մաս

***Հարց 255***

Նշվածներից ո՞րն է գնման առարկայի բնութագիր՝

- Մրցակցության հավասար պայմանների ապահովում հնարավոր մասնակիցների համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված 2-րդ մաս 1-ին ենթակետ

***Հարց 256***

Նշվածներից ո՞րն է գնման առարկայի բնութագիր՝

- Օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինելը այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված 2-րդ մաս 3-րդ ենթակետ

***Հարց 257***

Ո՞ր դեպքում գնման առարկայի հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի <<կամ համարժեք>> բառերը՝

- Հղումներ օգտագործելու դեպքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված 5-րդ մաս

***Հարց 258***

Նշվածներից ո՞վ է որոշում գնման ընթացակարգի հաղթողին՝

- Գնահատող հանձնաժողովը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդված 1-ին մաս 5-րդ կետ

***Հարց 259***

Ո՞վ է հաստատում գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը՝

- ՀՀ կառավարությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված 1-րդ մաս, կետ 11

***Հարց 260***

Շինարարական աշխատանքների գնման համար նշվածներից ո՞ր փաստաթղթերի հիման վրա են նախատեսվում ֆինանսական միջոցներ՝

- Սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 4-րդ մաս

***Հարց 261***

Նշվածներից ով ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք՝

- Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված, 1-ին մաս

***Հարց 262***

Նշվածներից ո՞րն է գնում կատարելու ընթացակարգ՝

- Էլեկտրոնային աճուրդը

**«Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված 1-ին մաս 1-ին կետ**

***Հարց 263***

Նշվածներից ո՞րն է գնում կատարելու ընթացակարգ՝

- Գնանշման հարցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված 1-ին մաս 3-րդ կետ

***Հարց 264***

Նշվածներից ո՞րն է գնում կատարելու ընթացակարգ՝

- Մեկ անձից գնումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված 1-ին մաս 4-րդ կետ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ» ԿԱՐԳ**

**_Հարց 265_**

Ինչպե՞ս են կազմավորվում հանրակրթական դպրոցի դասարանները՝

- Հանրակրթական դպրոցի դասարանները կազմավորվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար՝ դպրոցի մանկավարժական խորհրդի որոշման հիման վրա, դպրոցի տնօրենի հրամանով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ,կետ4

**_Հարց 266_**

Որքան է հաստատության տարրական և միջին դպրոցի յուրաքանչյուր դասարանում սովորողների առավելագույն թիվը՝

- . Հաստատության տարրական և միջին դպրոցի յուրաքանչյուր դասարանում սովորողների առավելագույն թիվը 35 է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ,կետ5

**_Հարց 267_**

Որքա՞ն է հաստատության ավագ դպրոցի յուրաքանչյուր դասարանում սովորողների առավելագույն թիվը՝

- Ավագ դպրոցի յուրաքանչյուր դասարանում սովորողների առավելագույն թիվը՝ 30 է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ,կետ5

***Հարց 268***

Բազմահամակազմ դասարանները (ուսումնական խմբերը) կարող են լինել՝

- Երկհամակազմ, եռահամակազմ, քառահամակազմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ,կետ8

***Հարց 269***

Որքա՞ն է երկհամակազմ խմբերում սովորողների թիվը՝

- Երկհամակազմ խմբերում սովորողների թիվը չի կարող գերազանցել 15-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ,կետ9

***Հարց 270***

Որքա՞ն է եռահամակազմ խմբերում սովորողների թիվը՝

- Եռահամակազմ խմբերում սովորողների թիվը չի կարող գերազանցել 12-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ,կետ9

***Հարց 271***

Որքա՞ն է քառահամակազմ խմբերում սովորողների թիվը՝

- Քառահամակազմ խմբերում սովորողների թիվը չի կարող գերազանցել 8-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ, կետ9

## Աշխատանքային օրենսգիրք

***Հարց 272***

Ի՞նչ կարգով են ծագում աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները՝

- Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք», հոդվ. 14 մաս 1*

***Հարց 273***

Նշվածներից ո՞ր աշխատողների հետ է կնքվում որոշակի ժամկետով պայմանագրեր՝

- Համատեղությամբ աշխատանք կատարողների հետ:

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք», հոդվ. 95, մաս 3, 2-րդ կետ*

***Հարց 274***

Նշվածներից ո՞ր աշխատողների հետ է կնքվում որոշակի ժամկետով պայմանագրեր՝

- Սեզոնային աշխատանքներ կատարողների հետ:

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք», հոդվ. 95, մաս-3,3-րդ կետ*

***Հարց 275***

Նշվածներից ո՞ր աշխատողների հետ է կնքվում որոշակի ժամկետով պայմանագրեր՝

- Ժամանակավորապես բացակայող աշխատողին փոխարինող աշխատողի հետ:

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք»,*
*հոդվ. 95, մաս 3, 5-րդ կետ*

***Հարց 276***

Նշվածներից ո՞ր աշխատողների հետ է կնքվում որոշակի ժամկետով պայմանագրեր՝

- Օտարերկրացիների հետ՝ աշխատանքի թույլտվության կամ կացության իրավունքի վավերականության ժամկետով:

*ՀՀ ,Աշխատանքային օրենսգիրք»,*
*հոդվ. 95, մաս 3, 6-րդ կետ*

***Հարց 277***

Նշվածներից ո՞ր աշխատողների հետ է կնքվում որոշակի ժամկետով պայմանագրեր՝

- *Տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող և վաթսուներեք տարին լրացած կամ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող և վաթսունհինգ տարին լրացած անձանց հետ՝ գործատուի կողմից առաջարկվող պաշտոնում կամ աշխատանքում անձի մասնագիտական ունակությունների գնահատման հիման վրա:*

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք»,*
*հոդվ. 95, մաս 3, 7-րդ կետ*

***Հարց 278***

Գործատուն 14-ից մինչև 16 տարեկան անձանց ի՞նչ պայմանով կարող է ընդգրկել աշխատանքի՝

- Նրանց առողջությանը, անվտանգությանը, կրթությանը և բարոյականությանը չվնասող ժամանակավոր աշխատանքներում ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխան:

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք»,*
*հոդվ. 17, 2-րդ մաս, 2.1.*

***Հարց 279***

Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի, նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք՝

- Կազմակերպության լուծարման (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման և օրենքով նախատեսված դեպքերում պետական գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու) դեպքը:

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք»,*
*հոդվ.113, մաս 1, 1 ենթակետ*

***Հարց 280***

Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի, նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք՝

- Աշխատողի՝ զբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքը:

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք», հոդվ.113 մաս1, 1-3- ենթակետ*

***Հարց 281***

Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի, նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք՝

- Աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրով կամ ներքին կարգապահական կանոններով իրեն վերապահված պարտականություններն առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքը:

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք», հոդվ.113, մաս 1, 5 ենթակետ*

***Հարց 282***

Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի, նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք՝

- Աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքը:

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք», հոդվ.113 մաս1, 1-6- ենթակետ*

***Հարց 283***

*Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի, նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք՝*

- Անհարգելի պատճառով ամբողջ աշխատանքային օրվա (հերթափոխի) ընթացքում աշխատողի՝ աշխատանքի չներկայանալու դեպքը:

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք», հոդվ.113 մաս1, 1-9- ենթակետ*

***Հարց 284***

*Նշվածներից ո՞րն է աշխատանքային պայմանագրի, նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք՝*

- Պարտադիր բժշկական զննությունից աշխատողի հրաժարվելու կամ խուսափելու դեպքը:

*ՀՀ «Աշխատանքային օրենսգիրք», հոդվ.113 մաս1, 1-10- ենթակետ*

***Հարց 285***

*Նշվածներից ո՞րն է աշխապտանքային պայմանագրի, նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք՝*

- Տարիքային կենսաթոշակի իրավունք ունեցող աշխատողի վաթսուներեք տարին, իսկ տարիքային կենսաթոշակի իրավունք չունեցող աշխատողի վաթսունհինգ տարին լրանալու դեպքում, եթե համապատասխան հիմքը նախատեսված է աշխատանքային պայմանագրով:

*ՀՀ «Աշխապտանքային օրենսգիրք»,*
*հոդվ.113, մաս 1, 11 ենթակետ*

***Հարց 286***

Ո՞ր գործողություններն են աշխատանքային կարգապահության խախտում համարվում՝

- Աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:

*«ՀՀ Աշխապտանքային օրենսգիրք»,*
*հոդվ. 220*

***Հարց 287***

Ե՞րբ գործատուն կարող է կարգապահական տույժ կիրառել, եթե աշխատողը բացատրության չի ներկայացրել՝

- Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում բացատրություն:

*«ՀՀ Աշխապտանքային օրենսգիրք» հոդվ. 226*

***Հարց 288***

Եթե աշխատողը գործատուի կողմից աշխատանքային պայմանագրի լուծման հետ համաձայն չէ, ապա ի՞նչ ժամկետում կարող է դիմել դատարան՝

- Համապատասխան անհատական իրավական ակտը, (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում:

*«ՀՀ Աշխապտանքային օրենսգիրք», հոդվ. 265, 1 կետ*

***Հարց 289***

Ի՞նչ ակտով են սահմանվում ժամային, գործավարձային և ամսական դրույքաչափերը, աշխատանքի վարձատրության այլ ձևերը, չափն ու պայմանները, աշխատանքի նորմաները՝

- Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով:

*ՀՀ Աշխապտանքային օրենսգիրք, հոդվ. 180, մաս 2*

***Հարց 290***

Նշվածներից որն է աշխատանքային պայմանագրի, նախքան դրա գործողության ժամկետի լրանալը, լուծելու հիմք՝

- Աշխատողին նախկին աշխատանքում վերականգնելու դեպքում:

*« ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» ,*
*հոդվ. 113, 1-ին մաս, 4-րդ կետ,*

***Հարց 291***

Որքա՞ն է աշխատաժամանակի շաբաթական նորմալ տևողությունը՝

- Աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել շաբաթական 40 ժամից:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդվ. 139, 1-ին մաս*

***Հարց 292***

Որքա՞ն է 16-ից մինչև 18 տարեկան աշխատողների աշխատաժամանակի շաբաթական տևողությունը՝

- Շաբաթական մինչև 36 ժամ:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդվ. 140, մաս 1, կետ 5*

***Հարց 293***

Որքա՞ն է ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը՝

- Ամենամյա նվազագույն արձակուրդի տևողությունը հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում 20 աշխատանքային օր է, իսկ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 24 աշխատանքային օր:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդվ. 159, մաս 1*

***Հարց 294***

Որքա՞ն է ամենամյա երկարացված արձակուրդի տևողությունը բացառիկ դեպքերում՝

- Բացառիկ դեպքերում՝ 35 աշխատանքային օր՝ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում և 42 աշխատանքային օր՝ վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդվ. 160*

***Հարց 295***

Ե՞րբ է տրամադրվում ուսումնական հաստատությունների մանկավարժներին աշխատանքային առաջին տարում ամենամյա արձակուրդը՝

- Սովորողների և ուսանողների ամառային արձակուրդի ժամանակ՝ անկախ այն հանգամանքից, թե երբ են այդ մանկավարժներն սկսել իրենց աշխատանքը:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդվ. 164, մաս 6*

**Հարց 296**

Ո՞ր դեպքում է թույլատրվում ամենամյա արձակուրդից հետ կանչելը՝

- Ամենամյա արձակուրդից հետ կանչել թույլատրվում է միայն աշխատողի համաձայնությամբ:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք»,հոդվ. 166*

**Հարց 297**

Ե՞րբ է իրականացվում ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումը՝

- Ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդն սկսելուց 3 օր առաջ, իսկ եթե դա հնարավոր չէ գործատուից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդն սկսելու՝ աշխատողի դիմումում նշված ժամկետից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդվ. 169, մաս 2*

**Հարց 298**

Քանի՞ օրվա ընթացքում է գործատուն պարտավոր աշխատողին հանձնել աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի մեկ օրինակը՝

- Այն ընդունելուց հետո՝ անհատական իրավական ակտի մեկ օրինակը հանձնվում է աշխատողին երեք օրվա ընթացքում:

*« ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդ.5,մաս 4*

**Հարց 299**

Որքա՞ն է աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքը՝

- Այն չի կարող անցնել օրական 12 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ), իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդվ. 139, մաս 3*

**Հարց 300**

Նշվածներից ո՞րն է նպատակային արձակուրդի տեսակ՝

- Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» ,հոդվ. 171, կետ 2*

**Հարց 301**

Հաշմանդամ աշխատողին կամ ընտանիքի հիվանդ անդամին խնամող աշխատողին չվճարվող արձակուրդը ի՞նչ կարգով է տրամադրվում՝

- Բժշկական եզրակացությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ավելի, քան 30 օր տարվա ընթացքում:

*«ՀՀ Աշխապանքային օրենսգիրք» ,հոդվ. 176,մաս 1, կետ 2*

***Հարց 302***

Համատեղությամբ աշխատողին աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում արձակման նպաստ վճարվո՞ւմ է, թե ոչ՝

- Արձակման նպաստ չի վճարվում:

**«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդվ. 99, մաս 4**

***Հարց 303***

Ի՞նչ պարբերականությամբ և ժամկետներում է հաշվարկվում ու վճարվում աշխատավարձը՝

- Աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և աշխատանքային օրերին վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը:

*«ՀՀ Աշխապանքային օրենսգիրք», հոդվ. 192, մաս 1*

***Հարց 304***

Քանի՞ օր առաջ և ի՞նչ կարգով է գործատուն պարտավոր նախազգուշացնել փորձաշրջանը չանցած աշխատողին՝ աշխատանքից ազատվելու մասին՝

- Գործատուն կարող է մինչև փորձաշրջանի ժամկետը լրանալը աշխատողին ազատել աշխատանքից՝ այդ մասին երեք օր առաջ գրավոր ձևով ծանուցելով նրան:

*«ՀՀ Աշխապանքային օրենսգիրք», հոդվ.93, մաս 1*

***Հարց 305***

Ո՞ր աշխատանքն է համարվում համատեղությամբ կատարվող աշխատանք՝

- Հիմնական աշխատանքից ազատ ժամանակ, միևնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա կատարած աշխատանքը:

*«ՀՀ Աշխապանքային օրենսգիրք», հոդվ. 99, մաս 1*

***Հարց 306***

Միևնույն անձը կարո՞ղ է միաժամանակ ներկայացնել աշխատողների և գործատուների շահերը նույն կազմակերպությունում ու պաշտպանել դրանք՝

- Միաժամանակ չի կարող:

*« ՀՀ Աշխապանքային օրենսգիրք», հոդվ.23,մաս-2*

***Հարց 307***

Ո՞ր օրն է աշխատողը պարտավոր աշխատանքի անցնել՝

- Աշխատանքային պայմանագրում նշված օրը:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդվ 85, մաս 3*

**Հարց 308**

Նշված հիմքերից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը՝

- Կողմերի համաձայնությամբ:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» , հոդ.109, մաս 1, 1 կետ*

**Հարց 309**

Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը՝

- Պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդ.109,մաս 1,կետ 2*

**Հարց 310**

Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը՝

- Աշխատողի նախաձեռնությամբ:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդ.109,մաս 1, կետ 3*

**Հարց 311**

Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը՝

- Գործատուի նախաձեռնությամբ:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդ.109, մաս 1,կետ 4*

**Հարց 312**

Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը:

- Աշխատողի պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչելու դեպքում՝

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդ.109,մաս 1,կետ 5*

**Հարց 313**

Նշվածներից ո՞ր դեպքում է լուծվում աշխատանքային պայմանագիրը՝

- Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայության դեպքում, որին համապատասխան՝ աշխատողը ենթարկվել է այնպիսի պատասխանատվության, որը հնարավորություն չի տալիս շարունակելու աշխատանքը:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» ,հոդ.109,մաս 1, կետ 6*

**Հարց 314**

Կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերում աշխատողին քանի՞ օրով կարող է տրամադրվել չվճարվող արձակուրդ՝ մեկ տարվա ընթացքում՝

- Ոչ ավելի, քան 60 օր տևողությամբ:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք» ,հոդ.176 , մաս 3*

**Հարց 315**

Նշվածներից ո՞րն է նպատակային արձակուրդի տեսակ՝

- Չվճարվող արձակուրդը:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդ171,կետ 5*

**Հարց 316**

Ո՞ր դեպքում կարգապահական տույժը կարող է հանվել՝

- Եթե մինչև մեկ տարին լրանալը, աշխատողը թույլ չի տվել նոր կարգապահական խախտում և բարեխղճորեն կատարում է իր աշխատանքային պարտականությունները:

*«ՀՀ Աշխատանքային օրենսգիրք», հոդ. 230*

## «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք

**Հարց 317**

Հաշվապահական հաշվառման կարգավորման գործում ինչի՞ համար է պատասխանատվություն կրում կազմակերպության ղեկավարը՝

- Հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման կազմակերպման համար:

*«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, հոդվ. 11, մաս 1*

**Հարց 318**

*Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատություն ապահովելու նպատակով կազմակերպությունն անցկացնում է՝*

- *Ակտիվների և պարտավորությունների գույքագրում:*

*«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, հոդվ. 17, մաս 1*

**Հարց 319**

Ինչի՞ համար է պատասխանատու հաստատության գլխավոր հաշվապահը՝

- Հաշվապահական հաշվառումը վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար:

*«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, հոդվ. 12, մաս 2*

***Հարց 320***

Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի ներկայացման հետ, հաստատության ո՞ր աշխատողների համար է պարտադիր՝

- Հաստատության բոլոր աշխատողների:

*«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, հոդվ. 12, մաս 3*

***«Էքսփեռն դրսեկություն փոխադրական և ավարփական քննություններ կազմակերպելու» կարգ***

***Հարց 321***

**Ուսումնառության ամբողջ ժամանակահատվածում հանրակրթական ուսումնական հաստատության սովորողը քանի՞ անգամ կարող է վաղաժամկետ փոխադրվել դասարանից դասարան՝**

- Միայն մեկ անգամ:

«Էքստեռն դրսեկություն փոխադրական և ավարտական
քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 5

***Հարց 322***

**Հանրակրթական ուսումնական հաստատության ո՞ր դասարանների սովորողների համար էքստեռն փոխադրական քննություններ չեն կազմակերպվում՝**

- Առաջին և երկրորդ աստիճանի կրթական ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության ավարտական դասարանների սովորողների համար:

«Էքստեռն դրսեկություն փոխադրական և ավարտական
քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 6

***Հարց 323***

**Ինչպես են նշանակվում դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրված սովորողների կիսամյակային և տարեկան գնահատականները՝**

- Դասարանից դասարան վաղաժամկետ փոխադրված սովորողների քննական գնահատականները համարվում են կիսամյակային և տարեկան գնահատականներ:

«Էքստեռն դրսեկություն փոխադրական և ավարտական
քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 16

*Հարց 324*

**Ո՞ր դասարանների ծրագրային նյութերից են կազմակերպվում էքստեռն փոխադրական քննությունները (գիտելիքների ստուգումը) `**

- Տվյալ դասարանի 2-րդ կիսամյակի և հաջորդ դասարանի 1-ին կիսամյակի ուսումնական պլաններով նախատեսված բոլոր առարկաների ծրագրային նյութերից:

«Էքստեռն դրսեկություն փոխադրական և ավարտականշ քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 9/3

*Հարց 325*

**Նշվածներից ո՞ր մարմնի որոշմամբ և քանի՞ միավոր ստանալու դեպքում էքստեռն քննություններ հանձնած սովորողը կարող է վաղաժամկետ փոխադրվել դասարանից դասարան՝**

- Փոխադրական բոլոր քննություններից 10 բալային համակարգով 9¬10 միավոր ստանալու դեպքում դպրոցի մանկավարժական խորհուրդի որոշմամբ սովորողը վաղաժամկետ փոխադրվում է դասարանից դասարան:

«Էքստեռնդրսեկություն փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, կետ13.2

*Հարց 326*

**Ո՞ր տարիքի անձինք կարող են մասնակցել էքստեռն ավարտական քննություններին՝ հիմնական կրթության վկայական ստանալու համար՝**

- Մինչև տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ 16 տարին լրացած (լրացող) անձը:

«Էքստեռնդրսեկություն փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգ, 18

*Հարց 327*

**Ո՞վ կարող է էքստեռն կարգով ստանալ միջնակարգ կրթության ատեստատ՝**

- Էքստեռն կարգով հիմնական կրթության վկայական ստացած և 18 տարին լրացած դրսեկը՝էքստեռն կարգով հիմնական կրթության վկայական ստանալու տարվա 3-րդ քննաշրջանից սկսած:

«Էքստեռնդրսեկություն փոխադրական և ավարտական
քննություններ կազմակերպելու» կարգ, կետ19¬1, 23/3

*Հարց 328*

**Ո՞վ կարող է Էքստեռն կարգով ստանալ միջնակարգ կրթության ատեստատ՝**

- Հիմնական կրթության վկայական ունեցող անձը, եթե վկայական ստանալու տարվանից անցել է 4 և ավելի տարի ( տարիների հաշվարկը կատարվում է ուսումնական պարապմունքների ավարտման օրվանից) էքստեռն ավարտական քննությունների անցկացման երեք քննաշրջանների ընթացքում:

«Էքստեռն դրսեկություն փոխադրական և ավարտական
քննություններ կազմակերպելու» կարգ, կետ19.2 և 23

*Հարց 329*

Հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար էքստեռն ավարտական քննությունները քանի՞ քննաշրջաններով են կազմակերպվում՝

- 3 քննաշրջաններով:

«Էքստեռնդրսեկություն փոխադրական և ավարտական
քննություններ կազմակերպելու» կարգ, կետ23

*Հարց 330*

**Որքա՞ն ժամանակ են ուժի մեջ դրսեկի ստացած գնահատականները՝**

- Մինչև հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ ստանալը:

(«Էքստեռն դրսեկություն փոխադրական և ավարտական
քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 36)

*Հարց 331*

**Հիմնական կամ միջնակարգ կրթության ավարտական փաստաթղթում նշվածներից ո՞ր մարմինն է լիազորված կատարել «Էքստեռն» նշումը՝**

- ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումը:

«Էքստեռնդրսեկություն փոխադրական և ավարտական
քննություններ կազմակերպելու» կարգ, կետ 40

*Հարց 332*

**Էքստեռ ավարտական քննությունները գերազանց հանձնած անձը չի կարող պարգևատրվել՝**

- Գովասանագրով կամ մեդալով:

# « ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ, ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԻՑ ՈՒՇ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՈՎՈՐՈՂԻՆ ԱՅԼ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱԶԱՏԵԼՈՒ » ԿԱՐԳ

***Հարց 333***

**Ի՞նչպես է իրականացվում սովորողի ընդունելությունը ուսումնական հաստատություն՝**

- Տնօրենի հրամանով՝ դպրոցահասակ երեխայի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի և հաստատության ու ծնողի միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

« «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու ,սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու » կարգ, կետ 3

***Հարց 334***

Սահմանված ժամկետից ուշ սովորողը հանրակրթության մեջ ընդգրկվում է՝

- Մինչև 8 տարեկանը՝ 1-ին դասարան՝ ընդհանուր հիմունքներով:

«Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու ,սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու » կարգ, կետ23, 1-ին ենթակետ

***Հարց 335***

Սահմանված ժամկետից ուշ սովորողը հանրակրթության մեջ ընդգրկվում է՝

- 9-ից 15 տարեկան կամ մինչև 2 տարի ուսումն ընդհատած սովորողը՝ իր տարիքային խմբից մեկ դասարան ցածր՝ գիտելիքների գրավոր ստուգման արդյունքում

«Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու» կարգ, կետ23, 2-րդ ենթակետ

***Հարց 336***

Սահմանված ժամկետից ուշ սովորողը հանրակրթության մեջ ընդգրկվում է՝

- Կրթական 3-րդ աստիճանում դպրոց չհաճախած (մինչև 17 տարին լրանալը) սովորողը, հիմնական կրթության վկայական ներկայացնելու դեպքում ընդունվում է իր տարիքային խմբից մեկ դասարան ցածր, 10-րդ դասարան ընդունվելու դեպքում՝ 10-րդ դասարան

«Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու» կարգ, կետ23, 3-րդ ենթակետ

***Հարց 337***

Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդգրկումը դպրոց կատարվում է՝

- Սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող դպրոցում /դասարանում/, իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը:

«Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու» կարգ, կետ 5

***Հարց 338***

Որ դեպքում է սովորողի ուսուցման լեզվի ընտրությունը կատարում ծնողը ինքնուրույն՝

- Երբ ծնողը հանդիսանում է օտարերկրյա քաղաքացի, երկքաղաքացի, ՀՀ քաղաքացիություն չունեցող անձ , նաև այն դեպքում երբ սովորողի ծնողներից մեկն է ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա քաղաքացի կամ երկքաղաքացի:

« Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու »
կարգ, կետ 6

### *Հարց 339*

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար ուսուցման լեզուն՝

- Հայերենն է:

« Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու »
կարգ, կետ 6

### *Հարց 340*

Նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից դպրոց՝ սովորողի տեղափոխությունը կատարվում է՝

- Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում՝ 1-ին կուրսից՝ 10-րդ դասարան, 2-րդ կուրսից՝ 11-րդ դասարան, 3-րդ և 4-րդ կուրսերից՝ 12-րդ դասարան՝ բաց թողած ծրագրային նյութը լրացնելու պայմանով:

« Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու »
կարգ, կետ 15

### *Հարց 341*

դասարանները այլ երկրներում օտար լեզվով ուսուցմամբ դպրոցներում (դասարանում) սովորած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների երեխաները Հայաստանի Հանրապետություն վերադառնալիս՝

- Ուսումը շարունակում են հայերենով ուսուցմամբ համապատասխան դասարանում՝ համաձայն անհատական ուսուցման պլանի:

« Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու »
կարգ, կետ 17

### *Հարց 342*

Ուսումնառության ընթացքում առնվազն 5 տարի անընդմեջ այլ երկրներում օտար լեզվով ուսուցմամբ դպրոցներում (դասարանում) սովորած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների երեխաները Հայաստանի Հանրապետություն վերադառնալիս՝

- Կարող են ուսումը շարունակել օտար լեզվով ուսուցմամբ համապատասխան դասարաններում՝ դրանց առկայության դեպքում:

« Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու »
կարգ, կետ 18

### *Հարց 343*

Սովորողի ազատումը դպրոցից կատարվում է՝

- Ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի հիման վրա:

« Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու »
կարգ, կետ 20, 1-ին ենթակետ

### *Հարց 344*

Սովորողի ազատումը դպրոցից կատարվում է՝

- Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա:

« Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու »
կարգ, կետ 20, 2-րդ ենթակետ

## ***«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք***

### *Հարց 345*

Նշվածներից ո՞րն է վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք՝

- Իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը:

*«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք հոդվ. 33.2*

***Հարց 346***

Նշվածներից ո՞րն է վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք՝

- Իրավախախտում կատարելը անչափահասի կողմից:

*«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»*
*ՀՀ օրենսգիրք, հոդվ. 33.4*

***Հարց 347***

Նշվածներից ո՞րն է վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք՝

- *Մեկ տարվա ընթացքում կրկին անգամ նման իրավախախտում կատարելը, որի համար անձն արդեն ենթարկվել է վարչական տույժի. իրավախախտում կատարելը նախկինում հանցագործություն կատարած անձի կողմից:*

*«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»*
*ՀՀ օրենսգիրք, հոդվ. 34*

***Հարց 348***

Ո՞ր ժամկետում և դեպքում է անձը համարվում վարչական տույժի չենթարկված՝

- Եթե վարչական տույժի ենթարկված անձը տույժի կատարումն ավարտելու օրվանից մեկ տարվա ընթացքում նոր վարչական իրավախախտում չի կատարել:

*«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»*
*ՀՀ օրենսգիրք,հոդվ. 38*

***Հարց 349***

**Ծնողների կամ այլ անձանց կողմից անչափահասին հարբած վիճակի հասցնելը՝**

- **Առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով:**

**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»**
*ՀՀ օրենսգիրք, հոդվ. 177-րդ*

***Հարց 350***

Պետական ուսումնական հաստատություններում կրոն դասավանդելու սահմանված կարգը խախտելը՝

- Առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

*«Վարչական իրավախախտումների վերաբերյալ»*
*ՀՀ օրենսգիրք, հոդվ.205[2]*

## «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին ՀՀ օրենք»

**Հարց 351**

*Նշվածներից ո՞ր մարմնի որոշմամբ Պետական կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կարող է հանդիսանալ՝*

- *Միայն հիմնադրի:*

*«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին ՀՀ օրենք, հոդվ. 3, մաս 5)*

**Հարց 352**

*Ի՞նչ իրավունք ունի Պետական կազմակերպությունը, սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի նկատմամբ՝*

- *Օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել:*

*«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին ՀՀ օրենք, հոդվ. 4, մաս 2*

**Հարց 353**

*Պետական կազմակերպությունն իրեն ամրացված գույքը ո՞ր դեպքում կարող է հանձնել վարձակալության՝*

- *Եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ:*

*«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին ՀՀ օրենք, հոդվ. 5, մաս 3, պարբ.2)*

**Հարց 354**

*Պետական կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները ու՞մ սեփականությունն են՝*

- *Պետական կազմակերպության սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ պետական կազմակերպության կանոնադրությամբ:*

*«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին ՀՀ օրենք, հոդվ. 5, մաս 3, պարբ. 3*

**Հարց 355**

*Պետական կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչություններս ստեղծվում են՝*

- *Հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ:*

*«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին ՀՀ օրենք, հոդվ. 8, մաս 1*

***Հարց 356***

*Նշվածներից ո՞ր մարմինը կարող է հիմնել Պետական կազմակերպություն՝*

- *Միայն Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս կառավարության:*

*«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին ՀՀ օրենք, հոդվ. 9, մաս 2*

***Հարց 357***

Լիազորված պետական մարմինը՝

- *Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում պետական կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները:*

*« Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին ՀՀ օրենք, հոդվ. 14, մաս2, ենթակետ գ*

***Հարց 358***

*Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ՝*

- *Եթե լրացել է նրա 65 տարին:*

*«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին ՀՀ օրենք, հոդվ. 16, մաս 3, ենթ. ,բ*

***Հարց 359***

*Նշվածներից ո՞ր մարմինը իրավունք ունի հետ վերցնելու Պետական կազմակերպությանն ամրացված գույքը՝*

- *Հիմնադիրը:*

*«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների» մասին ՀՀ օրենք, հոդվ. 5, մաս 2*

***<<ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի Օրինակելի կանոնադրություն***

**Հարց 360**

*Հանրակրթական դպրոցում քաղաքական գործունեություն կամ քարոզչություն իրականացնելը՝*

- Արգելվում է՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն՝ կետ 12*

**Հարց 361**

*Ո՞րն է հանրակրթական դպրոցի գործունեության առարկան՝*

- Յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է՝ հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով:

«ՀՀ պետական ուսումնականհաստատություն»ՊՈԱԿ-ի
*Օրինակելի կանոնադրություն, կետ 13*

**Հարց 362**

Հանրակրթական դպրոցի կողմից հանրակրթություն իրականացնելիս հանրակրթական հիմնական ծրագրերը, որպես անբաժանելի մաս, կարող են ներառել՝

- Ուսումնամեթոդական, փորձարարական հետազոտական աշխատանքներ:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 17.1*

**Հարց 363**

Հանրակրթական դպրոցի կողմից հանրակրթություն իրականացնելիս հանրակրթական հիմնական ծրագրերը, որպես անբաժանելի մաս, կարող են ներառել՝

- Ուսումնաարտադրական բազաներում, մարզաառողջարարական ճամբարներում սովորողների ուսուցման, դաստիարակության ու հանգստի կազմակերպումը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 17. 8*

**Հարց 364**

Հանրակրթական դպրոցի կողմից հանրակրթություն իրականացնելիս հանրակրթական հիմնական ծրագրերը, որպես անբաժանելի մաս, կարող են ներառել՝

- Մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումներ կազմակերպելը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 17.2*

**Հարց 365**

Հանրակրթական դպրոցի կողմից հանրակրթություն իրականացնելիս հանրակրթական հիմնական ծրագրերը, որպես անբաժանելի մաս, կարող են ներառել՝

- Սովորողների համար հանրակրթական լրացուցիչ դասընթացների կազմակերպումը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 17 .3*

**Հարց 366**

Հանրակրթական դպրոցի կողմից հանրակրթություն իրականացնելիս հանրակրթական հիմնական ծրագրերը, որպես անբաժանելի մաս, կարող են ներառել՝

- Սովորողների երկարօրյա ուսուցման և կամ գիշերակացի կազմակերպումը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 17.7*

**Հարց 367**

Հանրակրթական դպրոցի կողմից հանրակրթություն իրականացնելիս հանրակրթական հիմնական ծրագրերը, որպես անբաժանելի մաս, կարող են ներառել՝

- Սովորողների՝ տրանսպորտային կազմակերպված փոխադրումներ կազմակերպելը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 17.6*

**Հարց 368**

*Նշվածներից ո՞րն է հանրակրթական դպրոցի ձեռնարկատիրական գործունեության տեսակ՝*

- *Արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը:*

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 18.4*

***Հարց 369***

Նշվածներից ո՞րն է հանրակրթական դպրոցի ձեռնարկատիրական գործունեության տեսակ:

- Լրացուցիչ  հանրակրթական ծրագրերի իրականացումը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 18.1*

***Հարց 370***

Նշվածներից ո՞րն է հանրակրթական դպրոցի ձեռնարկատիրական գործունեության տեսակ:

- Համակարգչային ծրագրերի և լեզուների լրացուցիչ ուսուցման կազմակերպումը  :

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
Օրինակելի կանոնադրություն, կետ 18.2

***Հարց 371***

Նշվածներից ո՞րն է հանրակրթական դպրոցի ձեռնարկատիրական գործունեության տեսակ:

- Ուսումնաարտադրական գործունեության ծավալումը և արտադրանքի իրացումը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 18.3*

***Հարց 372***

Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համար ստեղծված հանրակրթական դպրոցում (դասարանում) հանրակրթությունը կարող է կազմակերպվել՝

- Իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 21*

***Հարց 373***

Հանրակրթական ծրագրերի ավարտին ստուգվում է՝

- Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանությունը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 23*

***Հարց 374***

Հանրակրթական ծրագրերի ավարտին տրվում է՝

- *Հանրակրթական ծրագրերի յուրացումը հավաստող պետական նմուշի ավարտական փաստաթուղթ:*

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 23*

**Հարց 375**

Ուսումնական պլանները կազմվում են՝

- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հաստատված օրինակելի ուսումնական պլանների հիման վրա:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 25*

**Հարց 376**

Հանրակրթության բնագավառում հիմնադրի լիազորություններից է՝

- Հանրակրթական դպրոցի, ինչպես նաև նրա մասնաճյուղի հիմնադրումը, վերակազմակերպումը և լուծարումը:

*,ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 29. 1*

**Հարց 377**

Հանրակրթության բնագավառում հիմնադրի լիազորություններից է՝

- Հանրակրթական դպրոցի լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 29.2*

**Հարց 378**

Հանրակրթության բնագավառում հիմնադրի լիազորություններից է՝

- Հանրակրթական դպրոցի շահույթի օգտագործման կարգի սահմանումը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 29.5*

***Հարց 379***

*Հանրակրթության բնագավառում հիմնադրի լիազորություններից է՝*

- Հանրակրթական դպրոցի՝ սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 29.4*

***Հարց 380***

*Հանրակրթության բնագավառում լիազորված մարմնի լիազորություններից է՝*

- Հանրակրթական դպրոցի կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի ընդունած նորմատիվ ակտերի կատարման, կրթական ծրագրերի իրականացման վերահսկումը՝ հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 31.1*

***Հարց 381***

**Հանրակրթության բնագավառում լիազորված մարմնի լիազորություններից է՝**

- Հանրակրթական դպրոցի տնօրենի ներկայացմամբ՝ ամենամյա ծախսերի նախահաշվի, հաջորդ բյուջետային տարվա ֆինանսավորման մասին հայտի, հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակների հաստատումը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն,կետ 31.4*

***Հարց 382***

*Հանրակրթության բնագավառում լիազորված մարմնի լիազորություններից է՝*

- Իր լիազորությունների սահմաններում դպրոցի կոլեգիալ կառավարման և գործադիր մարմինների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և կանոնադրության պահանջներին հակասող որոշումները, հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները կասեցնելը կամ ուժը կորցրած ճանաչելը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 31.5*

***Հարց 383***

*Հանրակրթական դպրոցի ընդհանուր կառավարումը, դպրոցի գործունեության վերահսկողությունն իրականացնում է՝*

- *Լիազորված մարմինը:*

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 30*

***Հարց 384***

*Նշվածներից ո՞վ չի կարող լինել հանրակրթական դպրոցի տնօրենի տեղակալ, ինչպես նաև հաշվապահ՝*

- Հանրակրթական դպրոցի տնօրենի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր, քույր) կապված անձը չի կարող լինել դպրոցի տնօրենի տեղակալ, ինչպես նաև հաշվապահ:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն,կետ 71*

***Հարց 385***

**Նշվածներից ո՞րն է հանրակրթական դպրոցի խորհրդի լիազորություններից՝**

- **Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ընտրում է տնօրեն:**

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 33.1*

***Հարց 386***

**Նշվածներից ո՞րն է հանրակրթական դպրոցի խորհրդի լիազորություններից՝**

- Հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները:

«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի
*Օրինակելի կանոնադրություն, կետ 33.3*

*Հարց 387*

**Նշվածներից ո՞րն է հանրակրթական դպրոցի խորհրդի լիազորություններից՝**

- Գույքի օտարման և կամ ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների վերաբերյալ տնօրենի ներկայացրած առաջարկությունները լսելը և հավանություն տալը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*

Օրինակելի կանոնադրություն, կետ 33.11

*Հարց 388*

**Նշվածներից ո՞րն է հանրակրթական դպրոցի խորհրդի լիազորություններից՝**

- Սահմանում է հիմնադրի սահմանած կարգով հանրակրթական դպրոցի շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*

*Օրինակելի կանոնադրություն,կետ 33.10*

*Հարց 389*

*Ե՞րբ է Խորհրդի նիստն իրավազոր՝*

- Եթե դրան մասնակցում է Խորհրդի անդամների կեսից ավելին, իսկ տնօրենի ընտրության ժամանակ՝ առնվազն 6 անդամ:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*

*Օրինակելի կանոնադրություն,կետ 41*

*Հարց 390*

*Քվեարկության ժամանակ խորհրդի անդամը քանի՞ ձայնի իրավունք ունի՝*

- Միայն մեկ ձայնի:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*

*Օրինակելի կանոնադրություն,կետ 43*

*Հարց 391*

*Թույլատրվու՞մ է արդյոք խորհրդի անդամին ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն խորհրդի այլ անդամի՝*

- *Չի թույլատրվում:*

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*

*Օրինակելի կանոնադրություն,կետ 43*

*Հարց 392*

**Նշվածներից ո՞ր դեպքում է  կասեցվում խորհրդի անդամի լիազորությունները՝**

- Տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու դեպքում՝

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*

*Օրինակելի կանոնադրություն,կետ 45*

***Հարց 393***

Կարո՞ղ է խորհրդի անդամը լինել տվյալ դպրոցի տնօրենի պաշտոնակատար՝

- Ոչ, չի կարող:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն,կետ 36*

***Հարց 394***

*Նշվածներից ո՞ր մարմինն է ղեկավարում հանրակրթական դպրոցի ընթացիկ գործունեությունը՝*

- Հանրակրթական դպրոցի տնօրենը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն,կետ 47*

***Հարց 395***

*Հանրակրթական դպրոցի փնօրենը՝ մանկավարժական խորհրդի ներկայացմամբ հաստատում է՝*

- Հանրակարթական դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն,կետ 48-5*

***Հարց 396***

*Հանրակրթական դպրոցի փնօրենն ի՞նչ կարգավիճակով է մասնակցում խորհրդի նիստերին՝*

- Խորհրդակցական ձայնի իրավունքով:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն,կետ 48-6*

***Հարց 397***

Հանրակրթական դպրոցի տնօրենը՝

- Ապահովում է դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 48.15*

***Հարց 398***

*Հանրակրթական դպրոցում դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում՝*

- Հանրակրթական դպրոցի տնօրենը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 48.10*

**Հարց 399**

*Հանրակրթական դպրոցում ո՞վ է ապահովում բյուջետային հատկացումների, հիմնադրի և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից օրենքով սահմանված կարգով ստացված միջոցների արդյունավետ օգտագործումը, ուսումնանյութական բազայի հաշվառումը, պահպանումը, համալրումը՝*

- Հանրակրթական դպրոցի տնօրենը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի Օրինակելի կանոնադրություն, կետ 48.16*

**Հարց 400**

*Ո՞վ կամ ո՞ր մարմնի ղեկավարն է ներկայացնում հանրակրթական դպրոցը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններում և այլ կազմակերպություններում բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ, տալիս է լիազորագրեր՝*

- Հանրակրթական դպրոցի տնօրենը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի Օրինակելի կանոնադրություն, կետ 48.19*

**Հարց 401**

*Տնօրենը հանրակրթական դպրոցի կառավարման մյուս մարմինների ո՞ր որոշումները, կարգադրությունները, հրամանները պարտավոր չէ կատարել և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության՝*

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և կանոնադրությանը հակասող որոշումները:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի Օրինակելի կանոնադրություն, կետ 68*

**Հարց 402**

Տնօրենի բացակայության, ինչպես նաև տնօրենի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում լիազորված մարմինը՝ ըստ ենթակայության, հաստատության տնօրենի պաշտոնակատար նշանակում է՝

- Հանրակրթական դպրոցի տնօրենի տեղակալներից մեկին, իսկ անհնարինության դեպքում՝ այլ անձի, ով դպրոցի խորհրդի անդամ չէ:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի Օրինակելի կանոնադրություն, կետ 69*

***Հարց 403***

Հանրակրթական դպրոցի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝

- Լիազորված մարմնի կողմից ընտրված աուդիտորի կամ հիմնադրի ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

*ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 131*

***Հարց 404***

Հանրակրթական դպրոցի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներից է՝

- ՀՀ օրենսդրությամբ չարգելված և կանոնադրությանը չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 130. 3*

***Հարց 405***

*Բյուջետային տարվա յուրաքանչյուր եռամսյակից հետո՝ աճողական կարգով, 15 օրվա ընթացքում որտեղ կարող է հրապարակվել տեղեկատվություն դպրոցի բյուջեի և ծախսերի եռամսյակային կատարման մասին՝*

- *Հանրակրթական դպրոցի պաշտոնական կայքում, հաստատության հայտարարությունների համար նախատեսված անկյունում, ինչպես նաև՝ զանգվածային լրատվամիջոցներում:*

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 66.2*

***Հարց 406***

Հանրակրթական դպրոցը լրացուցիչ ֆինանսավորում կարող է ստանալ պետական բյուջեից՝

- ՀՀ կառավարության սահմանած մրցութային կարգով:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 129*

**Հարց 407**

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հանրակրթական դպրոցի ստացած եկամուտները՝

- Հանրակրթական դպրոցի սեփականությունն են:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 125*

**Հարց 408**

*Հանրակրթական դպրոցի տնօրենի՝ տնտեսական աշխատանքի գծով տեղակալը կամ տնտեսվարը պատասխանատու է՝*

- Հանրակրթական դպրոցի շենքի և գույքի պահպանման համար:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 72.1*

**Հարց 409**

Հանրակրթական դպրոցի տնօրենի՝ տնտեսական աշխատանքի գծով տեղակալը կամ տնտեսվարը պատասխանատու է՝

- Ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, դպրոցի սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի համար:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 72.1*

**Հարց 410**

Հանրակրթական դպրոցի տնօրենի՝ տնտեսական աշխատանքի գծով տեղակալը կամ տնտսավարը պատասխանատու է՝

- Ուսումնական պարապմունքներին դասասենյակների ժամանակին նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության համար:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 72.1*

**Հարց 411**

Հանրակրթական դպրոցի տնօրենի՝ տնտեսական աշխատանքի գծով տեղակալը կամ տնտեսվարը պատասխանատու է ՝

- Սպասարկող, տեխնիկական անձնակազմի աշխատանքի կազմակերպման, ինչպես նաև աշխատանքի անվտանգության տեխնիկայի համար:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի*
Օրինակելի կանոնադրություն, կետ 72.1

**Հարց 412**

Ո՞վ է միջոցներ ձեռնարկում հանրակրթական դպրոցի ուսումնանյութական բազան հարստացնելու և ամրապնդելու համար՝

- Հանրակրթական դպրոցի տնօրենի տնտեսական աշխատանքի գծով տեղակալը կամ տնտեսվարը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 72.2*

**Հարց 413**

Հանրակրթական դպրոցի ամրացված գույքի վարձակալության ժամկետը՝

- Չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 125*

**Հարց 414**

Հանրակրթական դպրոցի դասարանի ղեկավարը՝ (դասղեկ), իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝

- Դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի*
*Օրինակելի կանոնադրություն, կետ 74,- 1*

**Հարց 415**

Հանրակրթական դպրոցի դասարանի ղեկավարը՝(դասղեկ), իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝

- *Իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի փնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին փեղեկափվություն:*

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն»ՊՈԱԿ-ի*
Օրինակելի կանոնադրություն, կետ 74- 5

**Հարց 416**

Հանրակրթական դպրոցի դասարանի ղեկավարը՝(դասղեկ), իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝

- Սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 74.6*

**Հարց 417**

Դասարանի ղեկավարը (տարրական դպրոցում՝ դասվար) մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում՝

- *Սովորողին կարգապահական տույժի կամ խրախուսանքի ներկայացնելու հարցը:*

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 74.7*

**Հարց 418**

*Նշվածներից ո՞րն է հանրակրթական դպրոցի խորհրդակցական մարմին՝*

- Մանկավարժական խորհուրդը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 75*

**Հարց 419**

*Նշվածներից ո՞րն է հանրակրթական դպրոցի խորհրդակցական մարմին՝*

- Ծնողական խորհուրդը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 75*

**Հարց 420**

*Նշվածներից ո՞րն է հանրակրթական դպրոցի խորհրդակցական մարմին՝*

- Աշակերտական խորհուրդը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 75*

***Հարց 421***

*Նշվածներից ո՞րն է հանրակրթական դպրոցի խորհրդակցական մարմին՝*

- Շրջանավարտների խորհուրդը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 75*

***Հարց 422***

*Ե՞րբ է կազմավորվում մանկավարժական խորհուրդը՝*

- Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 76*

***Հարց 423***

*Ինչպե՞ս և ի՞նչ ժամկետով է ձևավորվում մանկավարժական խորհուրդը՝*

- Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 76*

***Հարց 424***

*Մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են՝*

- Դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 77*

***Հարց 425***

*Մանկավարժական խորհուրդը նախարարության սահմանած կարգով՝*

- Իր կազմից, փակ, գաղտնի քվեարկությամբ ընտրում է խորհրդի անդամների: Ընտրված են համարվում երկու առավել ձայն հավաքած ներկայացուցիչները:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ78*

***Հարց 426***

Մանկավարժական խորհուրդը քննարկում է՝

- սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը՝ ծնողի համաձայնության առկայության դեպքում:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*

*Օրինակելի կանոնադրություն կետ 79.2*

***Հարց 427***

Մանկավարժական խորհուրդը որոշում  է ընդունում՝

- Հանրակրթական դպրոցի աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողությունը սահմանելու մասին:

«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ

*Օրինակելի կանոնադրություն կետ 80.1*

***Հարց 428***

Մանկավարժական խորհուրդը որոշում  է ընդունում՝

- *Սովորողներին դասարանից դասարան փոխադրելու, ամառային առաջադրանքներ տալու մասին:*

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 80.3*

***Հարց 429***

Մանկավարժական խորհուրդը որոշում  է ընդունում՝

- *Որևէ առարկայի ուսումնասիրությունից ազատելու մասին:*

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 80.6*

***Հարց 430***

Մանկավարժական խորհուրդը որոշում  է ընդունում՝

- Ավագ դպրոցի փոխադրական դասարաններում տարեվերջյան քննություններ սահմանելու մասին:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 80.4*

***Հարց 431***

Մանկավարժական խորհուրդը որոշում  է ընդունում՝

- Սովորողներին քննություններին թույլատրելու, գովասանագրով պարգևատրելու մասին:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 80.5*

***Հարց 432***

Մանկավարժական խորհուրդը որոշում  է ընդունում՝

- Բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշման և քննությունների անցկացման ժամանակացույցի մասին:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 80.7*

***Հարց 433***

Մանկավարժական խորհուրդը որոշում  է ընդունում՝

- Հանրակրթական դպրոցի շրջանավարտներին ըստ կրթական մակարդակների պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու, գերազանցության մեդալով պարգևատրելու մասին:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
Օրինակելի կանոնադրություն կետ 80.9

***Հարց 434***

Մանկավարժական խորհուրդը որոշում  է ընդունում՝

- Օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսանքի միջոց կիրառելու մասին:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 80.10*

***Հարց 435***

Մանկավարժական խորհուրդը որոշում է ընդունում՝

- Հանրակրթական դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին և այն ներկայացնում է տնօրենին՝ հաստատման:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 80.11*

***Հարց 436***

*Ի՞նչ ժամկետներում են գումարվում մանկավարժական խորհրդի նիստերը՝*

- Առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 83*

***Հարց 437***

*Անհրաժեշտության դեպքում ո՞ւմ նախաձեռնությամբ կարող են գումարվել մանկավարժական խորհրդի արտահերթ նիստեր՝*

- Տնօրենի:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 83.1*

***Հարց 438***

*Անհրաժեշտության դեպքում ո՞ւմ նախաձեռնությամբ կարող են գումարվել մանկավարժական խորհրդի արտահերթ նիստեր՝*

- Մանկավարժական խորհրդի անդամների 1/3-ի:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 83.2*

***Հարց 439***

*Անհրաժեշտության դեպքում ո՞ր մարմնի նախաձեռնությամբ կարող են գումարվել մանկավարժական խորհրդի արտահերթ նիստեր՝*

- Լիազորված մարմնի:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 83.3*

***Հարց 440***

*Մանկավարժական խորհրդի նիստն իրավազոր է՝*

- եթե դրան մասնակցում է մանկավարժական խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին, իսկ խորհրդի անդամների ընտրության ժամանակ՝ առնվազն 2/3-ը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 88*

***Հարց 441***

*Մանկավարժական նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ՝*

- Մանկավարժական խորհրդի որոշմամբ:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 87*

***Հարց 442***

Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը քննարկում է՝

- Հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները, և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչ-ներին /դասվարներին/ տալիս երաշխավորություններ:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
Օրինակելի կանոնադրություն կետ 93.1

***Հարց 443***

*Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը ուսումնասիրում, ընդհանրացնում է՝*

- Մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*

*Օրինակելի կանոնադրություն կետ 93.3*

***Հարց 444***

**Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը նպաստում է՝**

- Ուսուցիչների /դասվարների/ որակավորման բարձրացմանը:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 93.4*

***Հարց 445***

Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը կազմակերպում է՝

- Մասնագիտական և մանկավարժական-մեթոդական, խորհրդակցություններ, խորհրդատվություններ:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 93 .6*

***Հարց 446***

Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝

- Ուսուցիչներին դասվարներին հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 93.7*

***Հարց 447***

Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝

- Սահմանված կարգով կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 93.8*

***Հարց 448***

Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը կատարում է՝

- Ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 93.10*

***Հարց 449***

Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը կազմակերպում է՝

- Դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 93.11*

**Հարց 450**

*Ի՞նչ հաճախականությամբ են գումարվում առարկայական մեթոդական միավորումների նիստերը՝*

- Առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 95*

**Հարց 451**

*Հանրակրթական դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է՝*

- Դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից:

*«ՀՀ պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ*
*Օրինակելի կանոնադրություն կետ 97*

**Հարց 452**

